ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

**Հավելված N 1**
**Հայաստանի Հանրապետության**
**պետական եկամուտների կոմիտեի**
**նախագահի 2020 թվականի**
**մայիսի 27-ի N 477-Ն հրամանի**

**Օրինակելի ձև**

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Գործադիր մարմնի կողմից
27.03.2023 թ.

ՀԱՇԵՏՎՈՒԹՅՈՒՆ
***ԽՈՇՈՐ ՌԻՍԿ ԿԱՌ ԵՎՐՈՊ ՄԻՋ ԳԻՏ ԿՐԹ ԿԵՆՏ***
հասարակական կազմակերպության 2022 թ. գործունեության մասին

| **1. Հասարակական կազմակերպության՝** | | | | |
|---|---|---|---|---|
| 1.1 Լրիվ անվանումը | | | ԽՈՇՈՐ ՌԻՍԿ ԿԱՌ ԵՎՐՈՊ ՄԻՋ ԳԻՏ ԿՐԹ ԿԵՆՏ | |
| 1.2 ՀՎՀՀ-ն | | | 02707335 | |
| 1.3 Գտնվելու վայրը | | | ԵՐԵՎԱՆ ՆՈՐ ՆՈՐՔ ՆՈՐ ՆՈՐՔ ԹԱՂԱՄԱՍ Նալբանդյան 23 | |
| 1.4 Պետական գրանցման համարը | | | 211.171.05118 | |
| 1.5 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը | | | 2009-07-21 | |
| 1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային) | | | +(374)91575512 | |
| 1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը | | | | |
| 1.8 Էլեկտրոնային փոստը | | | ecrmeurope@gmail.com | |
| 2 Գործադիր մարմնի ղեկավարի՝ | | | | |
| Անունը<br><br>Ստեփան | Ազգանունը<br><br>Բադալյան | | Պաշտոնը<br><br>ՌԿԵԿ վարչական խորհրդի նախագահ, գործադիր տնօրեն | |
| 3 Կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկան և նպատակը | | | | |
| Աղետների ռիսկերի և հասարակությունների խոցելիության նվազեցումը կայուն զարգացման հիմնական բաղադրիչներից են, և դրանց հետ կապված ռիսկերի կառավարումը հանդիսանում է կառավարության ուղղակի պատասխանատվության առարկան: Դա պետք է հիմնվի որոշումների ընդունման միասնական գործընթացի վրա, որի մեջ ներառված կլինեն գիտելիքը, խոցելիության գնահատականը և բոլոր մակարդակների կառավարման՝ ներառյալ տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև բնակչության լայն զանգվածները: | | | | |
| Բնակչության և քաղաքացիական հասարակության լայն զանգվածների արդյունավետ ներգրավումը մարդկանց կյանքին և առողջությանը սպառնացող անմիջական վտանգի նվազեցմանը և վերացմանը, բնակչությանը, համայնքներին և ամբողջ երկրին արտակարգ իրավիճակներից պատճառվող սոցիալական, տնտեսական և էկոլոգիական վնասների զգալիորեն կրճատմանը: | | | | |
| **4 Հասարակական կազմակերպության՝** | | | | |
| 4.1 Անդամների թիվը | | | 12 | |
| 4.2 Կամավորների թիվը | | | | |
| 5 Հաշվետու տարվա ընթացքում գումարված ժողովների քանակը | | | 1 | |
| **6. Իրականացված ծրագրեր՝** | | | | |
| Հ/Հ | 6.1 Ծրագրի անվանումը | 6.2 Վայրը | 6.3 Նպատակը | 6.4 Կարգավիճակը |
| 1 | ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ Ժամանակակից Սահմանադրություններում մարդու և քաղաքացու կենսագործունեության անվտանգության ապահովման, արտակարգ իրավիճակներից կյանքի, առողջության և սեփականության պաշտպանության իրավունքների արտացոլմանն ուղղված առաջարկությունների մշակում | Հայաստանի հանրապետություն | Ծրագրի մշակման հիմնական նպատակը մասամբ արտացոլված է անվանման մեջ: Հաջորդ նպատակն է 2008 թ.մարտի 1-ին իշխանությունների կողմից իրականացված, օրենքով չսահմանված, իրավիճակից թելադրվող , միջոցառումները որպես սահմանադրական կարգին սպառնացող գործողություններ որակող անկասելի իրավական ապացույցների մշակումն է: | Ավարտված |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | ՞Պաշտպանիր քո տարացքը՞ (ՊՔՏ) ունիվերսալ տարածաշրջանային (մարզա) Կայք էջի Հայաստանի համար ստեղծում : | Հայաստանի հանրապետություն | Տեղական բնակչության գիտելիքների, դպրոցգկանների և ուսանողների կառուցողական տեղեկատվական և ինժեներական տեխնոլոգիաների ու զանգվածային լրատվության միջոցներրի արդյունավետ ներգրավումը աղետների դեմ:Արդյունքները ներկայացված են ՀՀ կառավարություն և այլ կառույցներ: | Ընթացքի մեջ |

**7. Հանրային միջոցներով իրականացված ծրագրեր՝**

| Հ/Հ | 7.1 Ծրագրի անվանումը | 7.2 Վայրը | 7.3 Կարգավիճակը | 7.4 Նպատակը | 7.5 Հիմնական արդյունքներր |
|---|---|---|---|---|---|
| 1 | | | | | |

**8. Տարեկան մուտքեր՝**

| | |
|---|---|
| 8.1 Դրամական միջոցները | 3,455,400 |
| 8.2 Գույքը | |
| Ընդամենը | 0 |

**9. Հանրային միջոցներ և ստացման աղբյուրներ**

| Հ/Հ | 9.1 Դրամական միջոցները | 9.3 Ստացման աղբյուրները |
|---|---|---|
| 1 | | |
| Հ/Հ | 9.2 Գույքը | |
| 1 | | |
| Ընդամենը | 0 | |

**10. Օգտագործված դրամական միջոցները և/կամ շարժական/անշարժ գույքը՝**

| | | |
|---|---|---|
| 10.1 Դրամական միջոցները | | 3,445,400 |
| 10.2 Գույքը | | |
| Հ/Հ | 10.2.1 Տեսակը | 10.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 3,445,400 |

**11. Հանրային դրամական միջոցների և/կամ տրամադրված գույքի օգտագործումը, ծախսերը՝**

| | | |
|---|---|---|
| 11.1 Դրամական միջոցները | | |
| 11.2 Գույքը | | |
| Հ/Հ | 11.2.1 Տեսակը | 11.2.2 Արժեքը |
| 1 | | |
| Ընդամենը | | 0 |

**12. Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու՝**

| Հ/Հ | 12.1 Տեսակը | 12.2 Ստացված շահույթը | 12.3 Շահույթի օգտագործումը |
|---|---|---|---|
| 1 | | | |
| Ընդամենը | | 0 | |

Նշումներ

ՌԿԵԿ ՀԿ-ն հանդիսանում է Եվրոպայի Խորհրդի Խոշոր ռիսկերի համաձայնագրի Եվրոպական կենտրոնների ցանցի անդամ -կենտրոն, ապա ՌԿԵԿ-ը համագործակցության շրջանակներում սահմանվածկարգով ներկայացնում է Համաձայնագրի գործադիր քարտուղարությանը տարեկան տեքստային և մանրակրկիթ ֆինանսական հաշվետվություններ հաստատված Եվրոպայի Ծորհրդի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման վերաբերյալ: Կից ֆայլերով ներկայացնում եմ 2022 թ. տարեկան հաշվետվությունները:

Կից ներկայացվում է՝

Աուդիտորի եզրակացություն՝ ________0________ էջից

Էջերի քանակը

Գործադիր մարմնի ղեկավար ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

Գլխավոր հաշվապահ ______________________
ստորագրություն, անունը, ազգանուն

## ECRM, YEREVAN, 2022, ACTIVITY B (2), APPENDIX III – FINANCIAL REPORT

| | |
|---|---|
| **Action:** | “Developing proposals for reflecting in the modern Constitutions the human and civic rights to secure safe life activities and protect of life, health and property against emergencies”. |
| **Place:** | Yerevan, Armenia |
| **Implementation period:** | 1 June to 1 November 2022 |
| **CoE Administrator responsible:** | Krzysztof ZYMAN |
| **Currency:** | Armenian Dram (AMD) |
| **Grant by the Council of Europe:** | 3 000 € |
| **Contribution by the Grantee:**[1] | In kind contribution with intellectual work |

| **Activity 1** | “Developing proposals for reflecting in the modern Constitutions the human and civic rights to secure safe life activities and protect of life, health and property against emergencies”. **Coordinator Centre:** ECRM, Yerevan. **Administrator responsible:** Stepan BADALYAN | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ***Local currency*** | | **€** | ***Exchange rate (/1 €)*** | | **398,2 AMD** | | ***Initial exchange rate**** | **470 AMD** |
| **Payments** | **Unit** | **# of units** | **Average unit rate** | **# of partici pants** | **Costs (local currency)** | **Costs (€)** | **Estimated Budget €** | **Invoice reference number** | **Over spending** |
| 1. **Per diems** | | | | | | | | | |
| 1.1 Hotel expenses | Per night | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 1.2 Lunches | Per lunch | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 1.3 Dinners | Per dinner | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 1.4 Coffee breaks | Per break | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 0 | 0 | | | | | **0** | 0 | | **0** |
| ***Subtotal Per diems*** | | | | | **0** | **0** | 0 | | **0** |
| 2. **Travel** | | | | | | | | | |
| 2.1 National participants | Per trip | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.2 Local transport (coach hire) | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.3 Local transport (taxi) | Per trip | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.4 International transport | Per trip | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.5 Transport cost | Per month | 5 | 9 600 | | 48 000 | **120,5** | 106,4 | 000477 | **+ 14,1** |
| ***Subtotal Travel*** | | | | | **48 000** | **120,5** | 106,4 | | **+ 14,1** |
| 3. **Rent of hall, interpretation and translation** | | | | | | | | | |
| 3.1 Rent of hall | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 3.2 Rent of interpretation equipment | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 3.3 Interpretation services (days x unit rate x interpreters) | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 3.4 Translation (pages x unit rate) | Per page | 76 | 3 500 | | 267 324 | **671,3** | 565,6 | 005072, 000254, 000527 005076, 000258, 000524 | **+ 105,7** |
| | 0 | | | | 0 | | | | |
| ***Subtotal Rent of hall, interpretation and translation*** | | | | | **267 324** | **671,3** | 565,6 | | **+ 105,7** |
| 4. **Publications and printed material** | | | | | | | | | |
| 4.1 Publications (editing) | Per item | | | | 0 | **0** | 0 | | **0** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4.2 Publications (printing) | Per copy | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 0 | 0 | | | | | **0** | 0 | | **0** |
| ***Subtotal Publications and printed material*** | | | | | **0** | **0** | 0 | | **0** |
| **5. Project Implementation** | | | | | | | | | |
| 5.1 Research/desk study fees | Work days | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 5.2 Equipment | Per item | 1<br>1<br>1 | 6 500<br>20 500<br>25 500 | | 52 500 | **131,8** | 137,2 | 000477, 000472, 000473 | **- 5,4** |
| 3 Other overheads | specify | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 5.4 Experts fee | Per Activity | | | | 737 680 | **1 852,5** | 1 785,3 | 002481, 000322, 000526, 000253,<br>000063, 005073,<br><br>002484, 000325, 000523; 000256,<br>000065, 005075, | **+ 67,2** |
| ***Subtotal Project Implementation*** | | | | | **790 180** | **1 984,4** | 1 922,5 | | **+61,8** |
| **6. Administrative fees** | | | | | | | | | |
| 6.1 Stationery supplies | Per Activity | | | | 18 445 | **46,3** | 53,2 | 000222 | **- 6,9** |
| 6.2 Other services (tel/fax, mail, copies) | Per month | 4 | 5 348<br>6 000<br>6 000<br>6 500 | | 23 848 | **59,9** | 226,8 | 000521, 001021, 000320, 005079 | **- 166,9** |
| 6.3 Internet services | Per month | 4 | 11 500 | | 46 000 | **115,5** | 125,5 | 000468, 000319, 000520, 000251 | **- 10** |
| ***Subtotal Administrative fees*** | | | | | **88 293** | **221,7** | 405,5 | | **- 183,8** |
| **Total project costs (1-6)** | | | | | **1 193 797** | **2 998** | 3 000 | | **- 2,0** |
| **Council of Europe contribution** | | | | | | **3 000** | | | |
| **Already paid (credit advice slip for 1st instalment in local currency)** | | | | | | **2 400** | | | |
| **Amount due** | | | | | | **600** | | | |

Notes:

[1]Indicate whether the grantee commits to contribute by means of an in-kind contribution, or by means of a financial contribution. In the first case, the in-kind contribution shall be described, while in the second case, the amount and the currency of the financial contribution shall be indicated in the box.

*Insert different lines to take into account differences of unit rates or number of participants in each event (lunch, journeys, etc).

"Average unit rate" can be used but not "Average number of participants". [2] See Articles 1.1 and 3.2.

I, the signatory, certify that the total amount of payments amounted to "sum in figures and currency" ("sum in letters and currency") and that all supporting documents have been attached

| | |
|---|---|
| **Name and capacity of the representative of the Grantee:** | **Stepan BADALYAN, Director** |
| **Signature:** |  |
| **Date:** | **30 November, 2022** |

# ECRM, YEREVAN, 2022, ACTIVITY A (1), APPENDIX III – FINANCIAL REPORT

| | |
|---|---|
| **Action:** | "Local Population`s Knowledge, Creative Information and Engineering Technologies of the Students and Mass Media Against Disasters". |
| **Place:** | Yerevan, Armenia |
| **Implementation period:** | 1 June to 1 November 2022 |
| **CoE Administrator responsible:** | Krzysztof ZYMAN |
| **Currency:** | Armenian Dram (AMD) |
| **Grant by the Council of Europe:** | 5 000 € |
| **Contribution by the Grantee:**[1] | In kind contribution with intellectual work |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **Activity 1** | "Local Population`s Knowledge, Creative Information and Engineering Technologies of the Students and Mass Media Against Disasters" (Involving school students into creative activities in the field of development and ensuring effective functioning of territorial online tools ("Protect Your Territory") PYT Web Page) through information and engineering technologies).<br>**Coordinator Centre:** ECRM, Yerevan. **Administrator responsible:** Stepan BADALYAN | | | | | | | | |
| | ***Local currency*** | | ***€*** | ***Exchange rate (/1 €)*** | | **398,2 AMD** | | ***Initial exchange rate**** | **470 AMD** |
| **Payments** | **Unit** | **# of units** | **Average unit rate** | **# of participants** | **Costs (local currency)** | **Costs (€)** | **Estimated Budget €** | **Invoice reference number** | **Over spending** |
| **1. Per diems** | | | | | | | | | |
| 1.1 Hotel expenses | Per night | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 1.2 Lunches | Per lunch | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 1.3 Dinners | Per dinner | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 1.4 Coffee breaks | Per break | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 0 | 0 | | | | | **0** | 0 | | **0** |
| | | | | ***Subtotal Per diems*** | **0** | **0** | 0 | | **0** |
| **2. Travel** | | | | | | | | | |
| 2.1 National participants | Per trip | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.2 Local transport (coach hire) | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.3 Local transport (taxi) | Per trip | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.4 International transport | Per trip | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 2.5 Transport cost | Per month | 5 | 28 800 | | 144 000 | **361,6** | 319,2 | 000174, 003560, 000475 | **+ 42,4** |
| | | | | ***Subtotal Travel*** | **144 000** | **361,6** | 319,2 | | **+ 42,4** |
| **3. Rent of hall, interpretation and translation** | | | | | | | | | |
| 3.1 Rent of hall | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 3.2 Rent of interpretation equipment | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 3.3 Interpretation services (days x unit rate x interpreters) | Per day | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 3.4 Translation (pages x unit rate) | Per page | 36 | 2 500 | | 89 108 | **223,8** | 188,5 | 000469, 000467, | **+ 35,3** |
| | 0 | | | | 0 | | | | |
| | | | | ***Subtotal Rent of hall, interpretation and translation*** | **89 108** | **223,8** | 188,5 | | **+ 35,3** |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **4. Publications and printed material** | | | | | | | | | |
| 4.1 Publications (editing) | Per item | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 4.2 Publications (printing) | Per copy | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 0 | 0 | | | | | **0** | 0 | | **0** |
| ***Subtotal Publications and printed material*** | | | | | **0** | **0** | 0 | | **0** |
| **5. Project Implementation** | | | | | | | | | |
| 5.1 Research/desk study fees | Work days | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 5.2 Equipment | Per item | 1<br>1 | 40 500<br>25 500 | | 66 000 | **165,7** | 152,1 | 000471, 000474 | **+ 13,6** |
| 3 Other overheads | specify | | | | 0 | **0** | 0 | | **0** |
| 5.4 Experts fee | Per Activity | | | | 1 592 785 | **4 000** | 3 886,2 | 000064, 003564, 004162, 005074, 000466; 002482, 000323, 003562, 004160; 002483, 000324, 003563, 004161, 000528, 000255; 000066, 003564, 004163; 005077, 000468; 002485, 000326, 003565, 004164; 002486, 000327, 003566, 004165, 000525, 000257 | **+113,8** |
| ***Subtotal Project Implementation*** | | | | | **1 658 785** | **4 165,7** | 4 038,3 | | **+127,4** |
| **6. Administrative fees** | | | | | | | | | |
| 6.1 Stationery supplies | Per Activity | | | | 17 960 | **45,1** | 63,8 | 000223 | **- 18,7** |
| 6.2 Other services (tel/fax, mail, copies) | Per month<br>Per item | 1<br>1<br>1 | 5 000<br>5 700<br>46 500 | | 57 200 | **143,6** | 239,6 | 000491, 00252, 000470, | **- 96** |
| 6.3 Internet services | Per month | 2 | 11 500 | | 23 000 | **57,8** | 150,6 | 001020, 005078, | **- 92,8** |
| ***Subtotal Administrative fees*** | | | | | **98 160** | **246,5** | 454 | | **- 207,5** |
| **Total project costs (1-6)** | | | | | **1 990 053** | **4 997,6** | 5 000 | | **- 2,4** |
| **Council of Europe contribution** | | | | | | **5 000,0** | | | |
| **Already paid (credit advice slip for 1st instalment in local currency)** | | | | | | **4 000** | | | |
| **Amount due** | | | | | | **1 000** | | | |

Notes:

[1]Indicate whether the grantee commits to contribute by means of an in-kind contribution, or by means of a financial contribution. In the first case, the in-kind contribution shall be described, while in the second case, the amount and the currency of the financial contribution shall be indicated in the box.

*Insert different lines to take into account differences of unit rates or number of participants in each event (lunch, journeys, etc).

"Average unit rate" can be used but not "Average number of participants". [2] See Articles 1.1 and 3.2.

I, the signatory, certify that the total amount of payments amounted to "sum in figures and currency" ("sum in letters and currency") and that all supporting documents have been attached

| | |
|---|---|
| | |
| **Name and capacity of the representative of the Grantee:** | **Stepan BADALYAN, Director** |
| **Signature:** |  |
| **Date:** | **30 November, 2022** |

Ստեփան  ԲԱՂԱԼՅԱՆ

# ê²ÐØ²Ü²¸ðàôÂÚàôÜÀ ºì ²ÜìÎ²Ü¶àôÂÚàôÜÀ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
## ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՆԵՑՎԱԾՔԻ
## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
## ԱՐՏԱՑՈԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

**(ê³ÑÙ³Ý³¹ñáõÃյուններում դրանց ³Ùñ³·ñÙ³Ý**
**Ï»Ýë³Ï³Ý  ³ÝÑñ³Å»ßïáõÃÛ³Ý  և ûñÇÝ³ã³÷ականáõÃÛ³Ý ÑÇÙÝ³íáñÙամբ).**

**Հետազոտությունները անց են կացվել և առաջարկությունները մշակվել են համապատասխանաբար**
**կիսանախագայական և խորհրդարանական կառավարման ձևերով**
**երկրների  ê³ÑÙ³Ý³¹ñáõÃյունների վերլուծության հիման վրա**

**Ð ² Ø ² è à Î ² ¶ Ð ð**

ԵՐԵՎԱՆ,   2022

**ê²ÐØ²Ü²¸ðàôÂÚàôÜÀ ºì ²ÜÏ²Ü¶àôÂÚàôÜÀ**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**
**ՄԱՐԴՈՒ ԿՅԱՆՔԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ**
**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ**
**ԱՐՏԱՑՈԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ**

**ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ**

**(ê³ÑÙ³Ý³¹ñáõÃյուններում դրանց ³Ùñ³·ñÙ³Ý**
**Ï»Ýë³Ï³Ý ³ÝÑñ³Å»ßïáõÃÛ³Ý և ûñÇÝ³ã³÷ականáõÃÛ³Ý ÑÇÙÝ³íáñÙամբ):**

**Հետազոտությունները անց են կացվել և առաջարկությունները մշակվել են համապատասխանաբար**
**կիսանախագայական և խորհրդարանական կառավարման ձևերով**
**երկրների ê³ÑÙ³Ý³¹ñáõÃյունների վերլուծության հիման վրա**

**Ð ² Ø ² è à Î ² ¶ Æ ð**

**Ü º ð ² Ì ² Î ² Ü**

Սույն նախագծի մշակումը պայմանավորված է անհրաժեշտությամբ`

- ³ñï³óáÉ»É Հայաստանի Հանրապետության, ºíñáå³ÛÇ ÊáñÑñ¹Ç Ëáßáñ íï³Ý·Ý»ñÇ Ñ³Ù³Ó³ÛÝ³·ñÇ ³Ý¹³Ù »ñÏñÝ»ñÇ, ինչպես նաև այլ շահագրգիռ պետությունների Å³Ù³Ý³Ï³ÏÇó ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ ³ÛÅÙÛ³Ý å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ Óև³íáñíáÕ Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý Ýáñ ÇÝëïÇïáõïÝ»ñÁ;
- ³Ùñ³·ñ»É Ñ³ïáõÏ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñ, áõÕÕí³Í Ï³é³í³ñáõÃÛáõÝÝ»ñÇ å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý µ³ñÓñ³óÙ³ÝÁ Ýßí³Í Çñ³íáõÝùÝ»ñÇ »ñ³ßË³íáñÙ³Ý, ÇÝãå»ë Ý³և »ñÏñÇ ïÝï»ë³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõóí³ÍùÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý µÝ³·³í³éÝ»ñáõÙ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ñ³Ù³ñ;
- ³Ùñ³·ñ»É Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñ, áõÕÕí³Í ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³ñ ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ, ÇÝãå»ë Ý³և ³Û¹ ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ, Ñ³Ù³Ó³ÛÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý. ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÝ»ñÇ և ûñ»Ýë¹ñáõÃÛ³ÝÁ ³ÙµáÕçáõÃÛ³Ùµ ³é³Í, û·ï³·áñÍÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý (Ý»ñÏ³Û³óáõóã³Ï³Ý) ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇ ÏáÕÙÇó ·áñÍáõÝ ÑëÏáÕáõÃÛ³Ý մեխանիզմների սահմանմանը և կատարելագործմանը:

Ս³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝáõÙ ³ñï³óáÉվող Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ վերը նշված Çñ³íáõÝùÝ»ñÁ ենթակա չեն լինի փոփոխման, կդառնան անօտարացվող և լիակատար պաշտպանված կլինեն օրենքով և դատարանով : Այս առումով Ս³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ ուղղակի գործողությունը ունի կարևորության բարձր աստիճան:

Համապատասխան սկզբունքային առաջարկությունները մշակվել են Հայաստանի Հանրապետության 2-ñ¹ և 3-րդ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝների Ñ³Ý·³Ù³Ý³ÉÇó վերլուծության հիման վրա (այստեղ և այսուհետև` ÐÐ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝ), որպես, համապատասխանաբար` կիսանախագայական և խորհրդարանական կառավարման ձևերով երկրների Սահմանադրությունների:

**2020** թ. անց են կացվել համապատասխան հետազոտություններ և մշակվել են կոնկրետ առաջարկություններ 27.11.2005 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ (որպես կիսանախագայական կառավարման ձևով երկրի Սահամանադրության), դրա նախագծի և համապատասխան օրենսդրության Ñ³Ý·³Ù³Ý³ÉÇó վերլուծության հիման վրա:

Ներկա փուլում` **2021** թ. անց են կացվել հետազոտություններ և մշակվել են համապատասխան առաջարկություններ 06. 12. 2015 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ գործող` 3-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ (որպես խորհրդարանական կառավարման ձևով երկրի Սահամանադրության) վերլուծության հիման վրա:
Միաժամանակ, **2021** թ. վերամշակվել են, լրացվել և նորին խմբագրվել են 2020 թ. անց կացված հետազոտությունների արդյունքները, հաշվի առնելով այժմյան իրողությունները Ù³ñ¹áõ և քաղաքացու իրավունքների ³å³ÑáíÙ³Ý բնագավառում Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· իրավիճակներից ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ուղղությամբ:

**Հետազոտությունները անց են կացվել, նկատի առնելով Եվրոպական առժեքները, ներառյալ *§êïáÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñը¦*, քաղաքացիական ³ñï³Ï³ñ· իրավիճակների կառավարման բնագավառի օրենսդրության մշակման և կիրառման հիմքում դրված ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñը և ã³÷áñáßÇãÝ»ñը:**

Ստորև, սույն Համառոտագրի Հատված I-ում և Հատված II-ում բերվում են սկզբունքային առաջարկություններ, ուղղված Ù³ñ¹áõ և քաղաքացու Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· իրավիճակներից ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý իրավունքների արտացոլմանը համապատասխանաբար` կիսանախագայական և խորհրդարանական կառավարման ձևերով երկրների ժամանակակից ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝներում (ՀՀ 2-ñ¹ և 3-րդ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝների վերլուծության հիման վրա) :

Ինչպես վերը նշված է (Ներածականի »ñÏñáñ¹ և »ññáñ¹ պարբերությունÝ»ñում) առաջարկությունները ուղղված են նաև ³Ùñ³·ñ»Éու ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝներում Ñ³ïáõÏ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñ, áõÕÕí³Í Ï³é³í³ñáõÃÛáõÝÝ»ñÇ å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý µ³ñÓñ³óÙ³ÝÁ Ýßí³Í Çñ³íáõÝùÝ»ñÇ »ñ³ßË³íáñÙ³Ý, ÇÝãå»ë Ý³և »ñÏñÇ ïÝï»ë³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõó í³ÍùÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý µÝ³·³í³éÝ»ñáõÙ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ñ³Ù³ñ, ինչպես նաև ³Ùñ³·ñ»Éու Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñ, áõÕÕí³Í ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³ñ ·áñÍ³¹Çñ

ÇßË³ÝáõÃÛ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý ¨ Çñ³Ï³Ý³óÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ, ÇÝãå»ë Ý³¨ ³Û¹ ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ, Ñ³Ù³Ó³ÛÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÝ»ñÇ ¨ ûñ»Ýë¹ñáõÃÛ³ÝÁ ³ÙµáÕçáõÃÛ³Ùµ ³é³Í, û·ï³·áñÍÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý (Ý»ñÏ³Û³óáõóã³Ï³Ý) ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇ ÏáÕÙÇó ·áñÍáõÝ ÑëÏáÕáõÃÛ³Ý **մեխանիզմների սահմանմանը և կատարելագործմանը :**:

**Առաջարկությունները ուղեկցվում են առաջարկվող իրավական նորմերի ê³ÑÙ³Ý³¹ñáõÃյունում ³Ùñ³·ñÙ³Ý Ï»Ýë³Ï³Ý ³ÝÑñ³Å»ßïáõÃÛ³Ý ¨ ûñÇÝ³ã³÷ականáõÃÛ³Ý Ñ³Ý·³Ù³Ý³ÉÇó ÑÇÙÝ³íáñÙամբ :**

**ՀԱՏՎԱԾ I**

**ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**
**ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ**
**ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ,**

**ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԿՅԱՆՔԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ**

**ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

***ԿԻՍԱՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎՈՎ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ***

**(Հետազոտությունները անց են կացվել և առաջարկությունները մշակվել են 27.11. 2005 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ և դրա նախագծի վերլուծության հիման վրա):**

Սույն Համառոտագրի Հատված I-ում հակիրճ ներկայացվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ ³ßË³ïáõÃÛ³Ý (այստեղ և այսուհետև` **§ԱßË³ïáõÃÛուÝ¦**) ëÏ½µÝ³Ï³Ý ï³ñµ»ñ³ÏÁ Ùß³Ïí»É և Ññ³å³ñ³Ïí»É ¿ ï³ñµ»ñ ËÙµ³·ñáõÃÛ³Ùµ, ÇÝãå»ë Ý³և Ý»ñÏ³Û³óí»É ¿ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ³ïÛ³ÝÝ»ñÇÝ Ð³Û³ëï³ÝÇ Ð³Ýñ³å»ïáõÃÛáõÝáõÙ (Ù³ëÝ³íáñ³å»ë ÐÐ ²½·³ÛÇÝ ÅáÕáíÇ Õ»Ï³í³ñáõÃÛ³ÝÁ և ËÙµ³ÏóáõÃÛáõÝÝ»ñÇÝ, ÇÝãå»ë Ý³և ÐÐ ê³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ¹³ï³ñ³Ý` Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ñ³Ý¹»ëáõÙ Ññ³å³ñ³ÏÙ³Ý Ñ³Ù³ñ) և Ýñ³ ë³ÑÙ³ÝÝ»ñÇó ¹áõñë ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý 2005 Ã .ÝáÛ»Ùµ»ñÇ 27-ÇÝ Ñ³Ýñ³ùí»áí ÁÝ¹áõÝáõÙÇó և 2008 Ã. Ù³ñïÇ 1-ÇÝ Ñ³Ï³ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý, ûñ»Ýùáí ãë³ÑÙ³Ýí³Í, §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ¦ Ñ³ÛïÝÇ áÕµ»ñ·³Ï³Ý Ñ»ïև³ÝùÝ»ñáí ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Çñ³Ï³ÝáõóáõÙÇó ß³ï í³Õ, ¹»é 2002 և 2004 Ã.Ã., ÇÝãå»ë Ý³և 2005 Ã. (ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý  Ý³Ë³·ÍÇ ùÝÝ³ñÏÙ³Ý ÷áõÉáõÙ): **§ԱßË³ïáõÃÛ³Ý¦** 4-ñ¹ µ³ÅÝÇ »ñÏñáñ¹ Ù³ëÁ ³é³çÇÝ Ùáï»óÙ³Ùµ Ùß³Ïí»É ¿ 2008 Ã. Ù³ñïÇ 1-Çó Ñ»ïá, Ç Ñ³í»ÉáõÙÝ ³í»ÉÇ í³Õ Ùß³Ïí³ÍÇ, և ³ÙµáÕç ³ßË³ïáõÃÛáõÝÁ Éñ³Ùß³Ïí»É ¿ և í»ñëïÇÝ ËÙµ³·ñÙ³Ý ¿ »ÝÃ³ñÏí»É 2020 - 22 Ã.Ã. համապատասխան նոր իրողությունների:

Ø³ëÝ³íáñ³å»ë, ³ßË³ïáõÃÛ³Ý 4.3.4. »ÝÃ³Ï»ïáõÙ ³é³ÝÓÝ³óí»É »Ý **2008 Ã. Ù³ñïÇ 1-Çó Ñ»ïá ëï»ÕÍí³Í Ñ³Ý·³Ù³ÝùÝ»ñáվ,** ինչպես նաև ներկայիս պահանջներով թելադրվող **Ù»ñ ³éçև ¹ñí³Í ËÝ¹ÇñÝ»ñÁ :**

**ՄԱՍ 1**

**²é³çÇÝ ËÝ¹ÇñÁ Ï³Û³ÝáõÙ ¿** ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ñá¹í³ÍÝ»ñի որոշ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÇ ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³Ï³ñ·»ñÇ ÑÇÙÝ³¹ñÙ³Ý և ûñ»Ýë¹ñáõÃÛ³Ý ßñç³Ý³ÏÝ»ñáõÙ ³ñï³Ï³ñ· ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý և û·ï³·áñÍÙ³Ý Ï³é³í³ñÙ³Ý ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñÇն և ã³÷áñáßÇãÝ»ñÇն (êïáÏÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ) ***անհամապատասխանության բացահայտման մեջ,*** ինչպես նաև ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý այդ նույն Ñá¹í³ÍÝ»ñի առանձին ÝáñÙ»ñÇ միջև ***հակասությունների  բացահայտման մեջ:***

Այդ ***անհամապատասխանությունները և հակասությունները*** ծառայեցին, մասամբ, ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ñá¹í³ÍÝ»ñáõÙ ë³ÑÙ³Ýí³Í, Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ ÑÇÙÝ³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñÁ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÁ »ñ³ßË³íáñáÕ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÇ 2008 թ. մարտի 1-ն Ïáåï³·áõÛÝ Ë³ËïÙ³Ý պատճառներից մեկը, ինչը և բերեց հայտնի ողբերգական հետևանքներին :

²ßË³ï³áõÃÛuLÝnLմ hամգամանալից վերլուծության հիման վրա բերվում են Ù³ñ¹áõ ¨ ù³Õ³ù³óáõ ÑÇÙÝ³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñÁ ¨ ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÁ »ñ³ßË³íáñáÕ վերը նշված Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÇ Ïáåï³·áõÛÝ Ë³ËïÙ³Ý ***Çñ³í³Ï³Ý ·Ý³Ñ³ï³Ï³ÝÝ»ñÇ*** ¨ Ï³ï³ñí³ÍÇ áÕç Ñ³Ýó³íáñáõÃÛ³Ý, Áëï ¿áõÃÛ³Ý, ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·Ç տապալման իրական ëå³éÝ³լիքի ստեղծման ***Çñ³í³Ï³Ý ·Ý³Ñ³ï³Ï³ÝÝ»ñÇ ÑÇÙÝ³íáñnLÙերը:***

Իñ³í³Ï³Ý ·Ý³Ñ³ï³Ï³ÝÝ»ñը հիմնավորված ¨ բերված են §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ ¨ ³Ýí³Ý·áõÃÛáõÝÁ¦ ³ßË³ïáõÃÛ³Ý 4-րդ հատվածում, մասնավորապես 4.10 կետում, **հիմնվելով** ինչպես ëույն ՅամառոտագրáõÙ (Յատված I-իÝ, Ø³ë 3-ñ¹, 3.2.1 »ÝÃ³կետ) իիշատակված քաղաքացիական ³ñï³Ï³ñ· Çñ³ÍÇ×³ÏÝ»ñÇ օրենսդրության մշակման ¨ կիրառման հիմքում ընկած ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñÇ ¨ ã³÷áñáßÇãÝ»ñÇ **(êïáÏÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ),** այնպես էլ, առավելապես, ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ñá¹í³ÍÝ»ñի առանձին ÝáñÙ»ñÇ միջև հակասությունների վերլուծության արդյունքների վրա:
(այստեղ ¨ այսուհետև` ÐÐ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝ),
**´»ñíáõÙ »Ý ³ÛÝ ³ÝÏ³ë»ÉÇ Çñ³í³Ï³Ý ³å³óáõÛóÝ»ñÁ, áñáÝù *µ³ó³éáõÙ »Ý áñ¨¿ »ÝÃ³¹ñáõÃÛáõÝ í»ñÁ Ýßí³Í ·Ý³Ñ³ï³Ï³ÝÝ»ñÇ ù³Õ³ù³Ï³Ý Ï³ÝËáñáßÙ³Ý í»ñ³µ»ñÛ³É*:**
Վï³Û³ÏáãíáõÙ »Ý Ñá¹í³ÍÝ»ñ 44-Á, 43-Á (³é³çÇÝ Ù³ëÁ), ÇÝãå»ë Ý³¨ Ñá¹í³ÍÝ»ñ 55-Ç (14-ñ¹ Ï»ïÇ) ¨ 117-Ç (1-ÇÝ ¨ 6-ñ¹ Ï»ï»ñÇ) Ëáñù³ÛÇÝ ¿áõÃÛáõÝÝ»ñÁ:

Ð³Ý·³Ù³Ý³ÉÇó å³ï³ëË³Ý ¿ ïñíáõÙ Ý³¨ ³ÛÝ Ñ³ñóÇÝ, Ã»` **ÇÝãáõ± ã¿ñ Ï³ñ»ÉÇ Ñ³Ûï³ñ³ñ»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ¨ Çñ³Ï³Ý³óÝ»É ûñ»Ýùáí ãë³ÑÙ³Ýí³Í, §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ¦ ÙÇçáó³éáõÙÝ»ñ ³é³Ýó §²ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Ù³ëÇÝ¦ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ñ³ïáõÏ ûñ»ÝùÇ ³éÏ³ÛáõÃÛ³Ý ¨ ÇÝãáõ± »Ý ³Û¹ å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Ñ³Ûï³ñ³ñáõÙÁ ¨ Ýßí³Í ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Çñ³Ï³Ý³óáõÙÁ Ñ³Ý¹Çë³ÝáõÙ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·Ç ëå³éÝ³óáÕ ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñ:**

Ð³Ù³éáïáõÃÛ³Ý Ñ³Ù³ñ ³Ûëï»Õ µ³í³Ï³Ý ¿ í³Û³Ïáã»É ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý 44-ñ¹ ¨ 43-ñ¹ Ñá¹í³ÍÝ»ñáõÙ ë³ÑÙ³Ýí³Í Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÇÝ:
Ð³ÏÇñ× ß³ñ³¹ñÙ³Ùµ ***Ñá¹í³Í 44-Ç ¿áõÃÛáõÝÁ*** Ï³Û³ÝáõÙ ¿ Ñ»ï¨Û³ÉáõÙ`
§Ø³ñ¹áõ ¨ ù³Õ³ù³óáõ ³é³ÝÓÇÝ ÑÇÙÝ³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñ Ï³ñáÕ »Ý ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í Ï³ñ·áí Å³Ù³Ý³Ï³íáñ³å»ë ë³ÑÙ³Ý³÷³Ïí»É é³½Ù³Ï³Ý Ï³Ù ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Å³Ù³Ý³Ï¦:
Æñ Ñ»ñÃÇÝ ***Ñá¹í³Í 43-Ç ¿áõÃÛáõÝÁ*** Ñ»ï¨Û³ÉÝ ¿`
§Ø³ñ¹áõ ¨ ù³Õ³ù³óáõ` ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý 23-25, 27, 28-30, 30.1.- ñ¹ Ñá¹í³ÍÝ»ñáí, 32-ñ¹ Ñá¹í³ÍÇ »ññáñ¹ Ù³ëáí ³Ùñ³·ñí³Í ÑÇÙÝ³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñÁ ¨ ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÁ Ï³ñáÕ »Ý ë³ÑÙ³Ý³÷³Ïí»É ÙÇ³ÛÝ ûñ»Ýùáí,…¦ :
²Û¹ Ñá¹í³ÍÝ»ñÇ ³é³Ýóù³ÛÇÝ Ñ³ëÏ³óáõÃÛáõÝÝ»ñÝ »Ý ` § ... **ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í Ï³ñ·áí**¦ ¨ §…**ÙÇ³ÛÝ ûñ»Ýùáí**¦:

àõß³·ñ³í ¿ ûñ»Ýùáí ãë³ÑÙ³Ýí³Í, §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ¦ ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Ñ³í³Ý³Ï³Ý Çñ³Ï³Ý³óÙ³Ý áÕµ»ñ·³Ï³Ý Ñ»ïև³ÝùÝ»ñÇ Ù³ëÇÝ Ý³Ë³½·áõß³óÝáÕ, **§ՄßË³ïáõÃÛ³Ý¦** 4-ñ¹ µ³ÅÝÇ 4.2. Ï»ïáõÙ ³ÙµáÕçáõÃÛ³Ùµ ß³ñ³¹ñí³Í Ï³ñևáñ³·áõÛÝ Ñ»ïևáõÃÛáõÝÝ»ñÇó Ù»ÏÁ, áñÁ ¹»é 2008 Ã. Ù³ñïÇ 1-Ç ¹»åù»ñÇó ß³ï í³Õ ½»ï»Õí³Í ¿ñ 2002 և 2004Ã.Ã. Ù»ñ ÏáÕÙÇó Ññ³å³ñ³Ïí³Í ÝÛáõÃ»ñáõÙ, ³Û¹ Ãíáõ٠` **§¶áÉáë ²ñÙ»ÝÇÇ¦** Ã»ñÃáõÙ **2004 Ã. û·áëïáëÇ 14-ħu** ïå³·ñí³Í. ***§àñå»ë½Ç Ï³ÝË³ñ·»É»É ³Õ»ïÝ»ñÁ: Ð³Û³ëï³ÝÇÝ ³ÝÑñ³Å»ßï ¿ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Ù³ëÇÝ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÁ¦*** Ñá¹í³ÍÇ í»ñçÇÝ Ù³ëáõÙ: ²ÛÝ ¿ª *§²ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÇ ·áïáõÙ Ù³ñ¹áõ ·ïÝí»Éáõ և ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ³Ý·³Ù³ÝùÝ»ñÇ µ³ó³éÇÏ ³é³ÝÓÝ³Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñáí å³ÛÙ³Ý³íáñí³Í, Ý³Ë³å»ë Ù³Ýñ³½ÝÇÝ Ï»ñåáí ÙB³Ïí³Í, ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í և µÝ³ÏãáõÃÛ³ÝÁ, ·áñÍ³¹Çñ և ûñ»Ýë¹Çñ ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇÝ Ï³ÝË³í Ñ³ÛïÝÇ Çñ³í³Ï³Ý Ñ³ïáõÏ ÝáñÙ»ñÁ ãÏÇñ³é»Éáõ, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñáõÙ »ñÏñÇ µÝ³ÏãáõÃÛ³Ý, ï³ñ³óùÇ, ïÝï»ë³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõóí³ÍùÝ»ñÇ, Ï»Ýë³Ï³Ýáñ»Ý Ï³ñևáñ é»ëáõñëÝ»ñÇ և ßñç³Ï³ ÙÇç³í³ÛñÇ ³Ýíï³Ý·áõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý µÝ³·³í³éáõÙ Ñ³ñ³µ»ñáõÃÛáõÝÝ»ñÇ ûñ»Ýë¹ñáñ»Ý ãÏ³ñ·³íáñ»Éáõ ÷áñÓ»ñÁ, ûñ»Ýùáí ãë³ÑÙ³Ýí³Í, §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Çñ³Ï³Ý³óáõÙÁ¦ Ï³ñáÕ »Ý Ñ³Ý·»óÝ»É ù³áëÇ և ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇ Ï³Ãí³Í³Ñ³ñáõÃÛ³ÝÁ,* ***Ù³ñ¹Ï³ÛÇÝ µ³½Ù³ÃÇí ½áÑ»ñÇ*** *և ÝÛáõÃ³Ï³Ý ½·³ÉÇ ÏáñáõëïÝ»ñÇ, ÇÝãå»ë և ³ÝûñÇÝ³Ï³ÝáõÃÛáõÝÝ»ñÇ áõ* ***Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ ÑÇÙÝ³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ Ë³ËïÙ³ÝÁ*** *(ûñ»Ýùáí ãë³ÑÙ³Ýí³Í Ï³ñ·áí ë³ÑÙ³Ý³÷³ÏÙ³ÝÁ),* ***ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·Ç íï³Ý·Ù³ÝÁ,*** *³Û¹ å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý ÇßË³ÝáõÃÛ³Ý ³Ýû·Ý³Ï³ÝáõÃÛ³ÝÝ áõ ³ÝÇñ³íáõÃÛ³ÝÁ: ÆëÏ ³Û¹ ³Ù»ÝÁ ÙÇ³ëÇÝ Ï³ñáÕ »Ý Éáõñç ëå³éÝ³ÉÇù ¹³éÝ³É å»ïáõÃÛ³Ý ³Ýíï³Ý·áõÃÛ³Ý և Ñ»ÕÇÝ³ÏáõÃÛ³Ý Ñ³Ù³ñ¦:*

´³Ûó ³í³Õ, ³Û¹ µáÉáñÁ í»ñ³Íí»ó ³å³ñ¹ÛáõÝ ç³Ýù»ñÇ` ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ ÁÝ¹áõÝí»ó 2005 Ã. ÝáÛ»Ùµ»ñÇ 27-Ç Ñ³Ýñ³ùí»áí áñå»ë µ³ñÓñ³·áõÛÝ Çñ³í³µ³Ý³Ï³Ý áõÅ áõÝ»óáÕ ÷³ëï³ÃáõÕÃ, Çëï ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ñá¹í³ÍÝ»ñÇó (Ðá¹í³Í 55, Ï»ï 14, Ðá¹í³Í 44, Ðá¹í³Í 43, Ðá¹í³Í 81, Ï»ï 3, Ðá¹í³Í 117, Ï»ï»ñ 1 և 6) ³é³ÝÓÇÝ Ñá¹í³ÍÝ»ñ, Ñ³ïÏ³å»ë 117-ñ¹ Ñá¹í³ÍÇ 6-ñ¹ Ï»ïÁ, Çñ»Ýó Ù»ç å³ñáõÝ³ÏáõÙ ¿ÇÝ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñ, áñáÝù áã ÙÇ³ÛÝ ã¿ÇÝ ÑÇÙÝíáõÙ **§ՄßË³ïáõÃÛ³Ý¦** 3-ñ¹ µ³ÅÝáõÙ (»ÝÃ³Ï»ï 3.2.2) Ñ³Ý·³Ù³Ýáñ»Ý Ý»ñÏ³Û³óí³Í, ÇÝãå»ë Ý³և 4-ñ¹ µ³ÅÝÇ 4.1. Ï»ïáõÙ Ýßí³Í ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ëÏ½µáõÝùÝ»ñÇ և ã³÷áñáßÇãÝ»ñÇ íñ³, ³ÛÉ Ý³և Ñ³Ï³ëáõÃÛ³Ý Ù»ç ¿ÇÝ ·ïÝíáõÙ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý í»ñÁ Ãí³ñÏí³Í ÙÛáõë Ñá¹í³ÍÝ»ñÇ Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ ³é³ÝÓÇÝ ÑÇÙÝ³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñÁ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÁ »ñ³ßË³íáñáÕ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÇ Ñ»ï:

**Ð»ïá »Ï³í 2008 Ã. Ù³ñïÇ 1-Á:**

ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý ÷á÷áËáõÃÛáõÝÝ»ñÝ áõÅÇ Ù»ç ÙïÝ»Éáõó Ñ»ïá **³Ýó»É ¿ñ ³í»ÉÇ, ù³Ý 2 ï³ñÇ,** áñáÝó ÁÝÃ³óùáõÙ ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ, áñå»ë Ñ³Ýñ³ùí»áí ÁÝ¹áõÝí³Í µ³ñÓñ³·áõÛÝ Çñ³í³Ï³Ý áõÅ áõÝ»óáÕ ÷³ëï³ÃáõÕÃ å³ñï³¹ñáõÙ ¿ñ (117-ñ¹ Ñá¹í³ÍÇ 1-ÇÝ Ï»ï, 55-ñ¹ Ñá¹í³ÍÇ 14-ñ¹ Ï»ïÇ í»ñçÇÝ Ù³ë) ÁÝ¹áõÝ»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Çñ³í³Ï³Ý é»ÅÇÙÁ ë³ÑÙ³ÝáÕ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÁ:

**Îáåï³·áõÛÝ Ï»ñåáí Ë³Ëïí»ó ÐÐ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ` ë³ÑÙ³Ýí³Í Å³ÙÏ»ïÝ»ñáõÙ ûñ»ÝùÁ ãÁÝ¹áõÝí»ó, ¹»é ³í»ÉÇÝ, Ñ³Ï³é³Ï ÐÐ ·áñÍáÕ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý 44-ñ¹ և 43-ñ¹ Ñá¹í³ÍÝ»ñáí ë³ÑÙ³Ýí³Í, Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ ÑÇÙÝ³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñÁ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÁ »ñ³ßË³íáñáÕ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÇ, ÇÝãå»ë Ý³և 55-ñ¹ Ñá¹í³ÍÇ 14-ñ¹ Ï»ïÇ Ëáñù³ÛÇÝ ¿áõÃÛ³ÝÁ, ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Çñ³í³Ï³Ý é»ÅÇÙÁ ë³ÑÙ³ÝáÕ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÇ µ³ó³Ï³ÛáõÃÛ³Ý å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ Ñ³Ûï³ñ³ñí»ó ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ և Çñ³Ï³Ý³óí»óÇÝ ûñ»Ýùáí ãë³ÑÙ³Ýí³Í §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ ÙÇçáó³éáõÙÝ»ñ¦ Ñ³ÛïÝÇ áÕµ»ñ·³Ï³Ý Ñ»ïև³ÝùÝ»ñáí:**

Ստորև, սույն Համառոտագրի Հատված I-ի Մաս 3-ի 3.2 կետի համապատասխան ենթակետերում, ի շարունակում Առաջին խնդրի շրջանակներում շարադրածի և առավել ակներևության համար, հակիրճ դիտարկվում են վերոնշյալ ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³Ï³ñ·»ñÇ ÑÇÙÝ³¹ñÙ³Ý և ûñ»Ýë¹ñáõÃÛ³Ý ßñç³Ý³ÏÝ»ñáõÙ ³ñï³Ï³ñ· ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý և û·ï³·áñÍÙ³Ý Ï³é³í³ñÙ³Ý ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñը և ã³÷áñáßÇãÝ»ñը (êïáÏÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ), ինչպես նաև վերլուծվում են Ñ³Ï³ëáõÃÛáõÝÝ»ñÁ ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃյաÝ համապատասխան Ñá¹í³ÍÝ»ñÇ ³é³³ÝÓÇÝ ÝáñÙ»ñÇ միջև :

## ՄԱՍ 2

**ºñÏñáñ¹ ËÝ¹ÇñÁ** ***Ï³Û³ÝáõÙ ¿*** Ýáñ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý կամ գործող ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý էական լրամշակման Ï»Ýë³Ï³Ý ³ÝÑñ³Å»ßïáõÃÛ³Ý ÑÇÙÝ³íáñÙ³Ý Ù»ç:

Այնպիսի **ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý,** áñÁ Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ ÑÇÙÝ³Ï³Ý ëáóÇ³É³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ ÃíáõÙ **Ï»ñ³ßË³íáñÇ նաև`**

- Ù³ñ¹áõ Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ÇÝãå»ë Ý³և ù³Õ³ù³óÇÝ»ñÇ ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý **³å³ÑáíáõÙÁ** ó³ÝÏ³ó³Í µÝáõÛÃÇ ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ;
- Ï³é³í³ñáõÃÛ³Ý և ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý ³ÛÉ Ù³ñÙÇÝÝ»ñÇ **å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý µ³ñÓñ³óáõÙÁ** վերը Ýßí³Í µÝ³·³í³éáõÙ, ինչպես նաև ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñáõÙ պետության քաղաքական և տնտեսական կառույցների գործունեության կայունության ապահովման µÝ³·³í³éáõÙ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ñ³Ù³ñ,
- ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³ñ ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ, ÇÝãå»ë  Ý³և ³Û¹ ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ, Ñ³Ù³Ó³ÛÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÝ»ñÇ և ûñ»Ýë¹ñáõÃÛ³ÝÁ ³ÙµáÕçáõÃÛ³Ùµ ³é³í, û·ï³·áñÍÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý (Ý»ñÏ³Û³óáõóã³Ï³Ý) ÇßË³ÝáõÃÛ³Ý ÏáÕÙÇó **·áñÍáõÝ ÑëÏáÕáõÃÛáõÝ** : **մեխանիզմների սահմանáւմը և կատարելագործáւմը :**

§ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ ωßËï³ïáõÃÛáõÝáõÙ ³ñí³Í »Ý ÐÐ 2-րդ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ñá¹í³ÍÝ»ñáõÙ վերոնշյալ երաշխիքների անսասանությանը ուղղված ÷á÷áËáõÃÛáõÝÝ»ñ և Éñ³óáõÙÝ»ñ ÙïóÝ»Éáõ í»ñ³µ»ñÛ³É ÏáÝÏñ»ï ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ :

**2020** թ. անց են կացվել համապատասխան հետազոտություններ և մշակվել են կոնկրետ առաջարկություններ 27.11.2005 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛωÝ ***(կիսանախագայական կառավարման ձևով երկրի Սահամանադրության օրինակով), դրա նախագծի*** և համապատասխան օրենսդրության Ñ³Ý·³Ù³Ý³ÉÇó վերլուծության հիման վրա: Վերոնշյալ հետազոտությունների արդյունքները **2021** թ. վերամշակվել են, լրացվել և նորին խմբագրվել են, հաշվի առնելով այժմյան իրողությունները Ù³ñ¹áõ և քաղաքացու Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· իրավիճալներից ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý բնագավառում :

Բացի այդ, ինչպես նշված է վերևում` սույն Համառոտ³·ñÇ Ներածականում, **2021թ** անց են կացվել հետազոտություններ և մշակվել են համապատասխան առաջարկություններ 06.12.2015 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ գործող` 3-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛωÝ ***(խորհրդարանական կառավարման ձևով երկրի Սահամանադրության օրինակով)*** վերլուծության հիման վրա: *Դրա մասին ավելի հանգամանորեն կշարադրվի ստորև` սույն Համառոտ³·ñÇ Հատված II-ում:*

Իսկ մինչ այդ վերադառնանք **2021** թ. վերամշակված, լրացված և նորին խմբագրված 2020թ. հետազոտությունների արդյունքներին: Նպատակահարմար էր համարվել շարադրել վերոհիշյալ կոնկրետ առաջարկությունները ***(կիսանախագայական կառավարման ձևով երկրի Սահամանադրության օրինակով)*** դիտվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ ωßËï³ïáõÃÛωÝ I-ին հատվածում, և միայն հետո, **§ԱßËï³ïáõÃÛωն¦** II. և III. հատվածներում հանգամանորեն հիմնավորել են առաջարկվող իրավական նորմերի Սահամանադրությամբ արտացոլման կենսական անհրաժեշտությունը և օրինաչափականությունը :

## ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ÐÐ 2-ñ¹ êԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***(կիսանախագայական կառավարման ձևով երկրի Սահամանադրության օրինակով)***

**1.** ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý **ԳԼՈՒԽ 2-ի`** **§*ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*¦** **Ðá¹í³Í 33.2.**-Çó Ñ»ïá áñå»ë **Ðá¹í³Í 33.3.** ÙïóÝ»É Ñ»ïևÛ³É µáí³Ý¹³ÏáõÃÛ³Ùµ å³ñµ»ñáõÃÛáõÝÁ`

**Ðá¹í³Í 33.3. Úáõñ³ù³ÝãÛáõñ áù áõÝÇ Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ ³å³ÑáíÙ³Ý, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý Ù áõÝ»óí³ÍùÇ å³ßïå³ÝáõÃÛ³Ý Çñ³íáõÝù: *)**

**2.** ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý **48-ñ¹ Ñá¹í³ÍáõÙ** 12-ñ¹ Ï»ïÇó Ñ»ïá áñå»ë **13-ñ¹ Ï»ï** ÙïóÝ»É Ý»ñùáß³ñ³¹ñíáÕ µáí³Ý¹³ÏáõÃÛ³Ùµ å³ñµ»ñáõÃÛáõÝÁ, ³å³ Ñá¹í³ÍÁ ß³ñáõÝ³Ï»É Áëï ï»ùëïÇ:

**Ðá¹í³Í 48.** îÝï»ë³Ï³Ý, ëáóÇ³É³Ï³Ý Ù ÙßáõÃ³ÛÇÝ áÉáñïÝ»ñáõÙ å»ïáõÃÛ³Ý ÑÇÙÝ³Ï³Ý ËÝ¹ÇñÝ»ñÝ »Ý`

**13) Çñ³Ï³Ý³óÝ»É µÝ³ÏãáõÃÛ³Ý Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñ, ÇÝãå»ë Ý³Ù ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ù³Õ³ù³óÇÝ»ñÇ ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý Ù áõÝ»óí³ÍùÇ å³ßïå³ÝáõÃÛáõÝÁ ³å³ÑáíáÕ ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛáõÝ:**

**.............................................**

***)** Այստեղ և այսուհետև թավատառով նշված են ÐÐ 2-ñ¹ Սահմանադրության (կիսանախագայական կառավարման ձևով երկրի Սահմանադրության օրինակով) համապատասխան հոդվածներում փոփոխություններ և լրացումներ մտցնելու համար մեր կողմից առաջարկվող փոփոխությունները և լրացումները :

**3.** ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý **ԳԼՈՒԽ 5-ի` §*ÎԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ*¦ 89-ñ¹ Ñá¹í³ÍÇ** 5-ñ¹ Ï»ïÁ ß³ñ³¹ñ»É Ñ»ïÙÛ³É ËÙµ³·ñáõÃÛ³Ùµ`

**Ðá¹í³Í 89.** Î³é³í³ñáõÃÛáõÝÁ`

**5)** Çñ³Ï³Ý³óÝáõÙ ¿ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛáõÝÁ ·ÇïáõÃÛ³Ý, ÏñÃáõÃÛ³Ý, ÙßáõÃÛ³Ý, ÙßáõÛÃÇ, ³éáÕç³å³ÑáõÃÛ³Ý, ëáóÇ³É³Ï³Ý ³å³ÑáíáõÃÛ³Ý, µÝáõÃÛ³Ý å³Ñå³ÝáõÃÛ³Ý, **ÇÝãå»ë Ý³Ù ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó »ñÏñÇ µÝ³ÏãáõÃÛ³Ý, ï³ñ³ÍùÇ, ÝÛáõÃ³Ï³Ý Ù å³ïÙ³-ÙßáõÃ³ÛÇÝ ³ñÅ»ùÝ»ñÇ å³ßïå³ÝáõÃÛ³Ý, å»ïáõÃÛ³Ý ïÝï»ë³Ï³Ý Ù ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõóí³ÍùÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý** µÝ³·³í³éÝ»ñáõÙ:

:

**4.** ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý **ԳԼՈՒԽ 3-ի` §*ÐԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԸ*¦ 55-ñ¹ Ñá¹í³ÍÇ** 14-ñ¹ Ï»ïÁ ß³ñ³¹ñ»É Ñ»ïÙÛ³É ËÙµ³·ñáõÃÛ³Ùµ`

**Ðá¹í³Í 55.** Ð³Ýñ³å»ïáõÃÛ³Ý Ü³Ë³·³ÑÁ`

**14)** ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·ÇÝ ëå³éÝ³óáÕ ³ÝÙÇç³Ï³Ý íï³Ý·Ç ¹»åùáõÙ, **Ï³Ù µÝ³Ï³Ý, ï»ËÝ³ÍÇÝ, Էկոլոգիական, կենսաբանական Ù ³ÛÉ µÝáõÛÃÇ É³ÛÝ³Í³í³É ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñáõÙ, áñáÝù Ñ³Ý·»óÝáõÙ »Ý Ï³Ù Ï³ñáÕ »Ý Ñ³Ý·»óÝ»É Ù³ñ¹Ï³ÛÇÝ µ³½Ù³ÃÇí ½áÑ»ñÇ, Ù³ñ¹Ï³Ýó ³éáÕçáõÃÛ³ÝÁ áõ ßñç³Ï³ ÙÇç³í³ÛñÇÝ Ñ³ëóíáÕ ½·³ÉÇ íÝ³ëÇ, Ëáßáñ ÝÛáõÃ³Ï³Ý Ïáñáõëïí»ñÇ, µÝ³ÏãáõÃÛ³Ý Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý µÝ³Ï³ÝáÝ å³ÛÙ³ÝÝ»ñÇ ¿³Ï³Ý í³ïÃ³ñ³óÙ³ÝÁ Ù å»ïáõÃÛ³Ý Ï³ñÙáñ³·áõÛÝ ïÝï»ë³Ï³Ý Ù ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõÛóÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý »ñÏ³ñ³ïÙ Ë³÷³ÝÙ³ÝÁ, Ñ³Ûï³ñ³ñáõÙ ¿ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ, ³Û¹ Ù³ëÇÝ áõÕ»ñÓáí ¹ÇÙáõÙ ¿ ÅáÕáíñ¹ÇÝ Ù Çñ³Ï³Ý³óÝáõÙ ¿ ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í Ñ³Ù³å³ï³ëË³Ý ÙÇçáó³éáõÙÝ»ñ:**

**²ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ Ññ³Ù³Ý³·ÇñÁ, Ññ³å³ñ³ÏÙ³Ý å³ÑÇó áã áõß ù³Ý 24 Å³ÙáõÙ, Ý»ñÏ³Û³óíáõÙ ¿ Çñ³íáõÝùÇ áõÅáí ·áõÙ³ñíáÕ ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ Ñ³ïáõÏ ÝÇëïÇ Ñ³ëï³ïÙ³ÝÁ:**

**²ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Çñ³í³Ï³Ý é»ÅÇÙÁ (Ï³ÝáÝ³Ï³ñ·Á), ÇÝãå»ë Ý³¨ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ ¨ ¹ñ³ ·áñÍáÕáõÃÛ³Ý »ñÏ³ñ³óÙ³Ý Ù³ëÇÝ ÐÐ Ý³Ë³·³ÑÇ Ññ³Ù³Ý³·ñ»ñÇ ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ ÏáÕÙÇó Ñ³ëï³ïÙ³Ý, ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý í»ñ³óÙ³Ý Ù³ëÇÝ ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ áñáßÙ³Ý ¨ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý é»ÅÇÙÇ (Ï³ÝáÝ³Ï³ñ·Ç) ·áñÍáÕáõÃÛ³Ý ÁÝÃ³óùáõÙ å³ñÉ³Ù»ÝïÇ³Ï³Ý (ËáñÑñ¹³ñ³Ý³Ï³Ý) ÑëÏáÕáõÃÛ³Ý Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ï³ñ·Á ¨ Ù»Ë³ÝÇ½ÙÝ»ñÁ ë³ÑÙ³ÝíáõÙ »Ý ûñ»Ýùáí:**

**5.** ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý **ԳԼՈՒԽ 5-ի` §*ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ*¦ 81-ñ¹ Ñá¹í³ÍÇ** 3-ñ¹ Ï»ïÇ í»ñçÇÝ å³ñµ»ñáõÃÛáõÝÁ ß³ñ³¹ñ»É Ñ»ï¨Û³É ËÙµ³·ñáõÃÛ³Ùµ`

**Ðá¹í³Í 81.** ²½·³ÛÇÝ ÄáÕáíÁ Ð³Ýñ³å»ïáõÃÛ³Ý Ü³Ë³·³ÑÇ ³é³ç³ñÏáõÃÛ³Ùµ`

²½·³ÛÇÝ ÄáÕáíÁ Ï³ñáÕ ¿ ã»ÕÛ³É Ñ³Ûï³ñ³ñ»É ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý 55-ñ¹ Ñá¹í³ÍÇ 13-ñ¹ Ï»ïáí Ý³Ë³ï»ëí³Í ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Çñ³Ï³Ý³óáõÙÁ:

**²½·³ÛÇÝ ÄáÕáíÁ ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í Ï³ñ·áí Ï³ñáÕ ¿ áñáßáõÙ ÁÝ¹áõÝ»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ ¨ ¹ñ³ ·áñÍáÕáõÃÛ³Ý »ñÏ³ñ³óÙ³Ý Ù³ëÇÝ ÐÐ Ý³Ë³·³ÑÇ Ññ³Ù³Ý³·ñ»ñÇ Ñ³ëï³ïÙ³Ý í»ñ³µ»ñÛ³É, áñáßáõÙ ÁÝ¹áõÝ»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý í»ñ³óÙ³Ý Ù³ëÇÝ:**

**6.** ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý **ԳԼՈՒԽ 9-ի`** ***§ԵԶՐԱՓԱԿԻâ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ*¦ 117-ñ¹ Ñá¹í³ÍÇó Ñ³Ý»É 6-ñ¹ Ï»ïÁ,** Ñ³Ù³å³ï³ëË³Ýáñ»Ý ÷áË»Éáí Ñ³çáñ¹ Ï»ï»ñÇ Ñ³Ù³ñ³Ï³ÉáõÃÛáõÝÁ:

**Ðá¹í³Í 117.** ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո

6) մինչև ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛաÝ Çñ³í³Ï³Ý é»ÅÇÙի ë³ÑÙ³Ýումդ ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ý³ñ³Ï³Ý Ï³ñ·ÇÝ ëå³éÝ³óáÕ ³ÝÙÇç³Ï³Ý íï³Ý·Ç ¹»åùáõÙ Ð³Ýñ³å»ïáõÃÛ³Ý Ü³Ë³·³Ñը, խորհրդակցելով ²½·³ÛÇÝ ÄáÕáíի Ն³Ë³·³Ñի և վարչապետի հետ, Çñ³Ï³Ý³óÝáõÙ ¿ իրավիճակից թելադրվող ÙÇçáó³éáõÙÝ»ñ և այդ մասին ուղերձով դիմում է ժողովրդին :

**ՄԱՍ 3**

Ինչպես նշված է սույն Համառոտագրի Հատված I-ի Մաս 2-ում` **քննարկվող** §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýí³Ý·áõÃÛáõÝÁ¦ աßË³ïáõÃÛաÝ 1-ին հատվածում ÐÐ 2-ñ¹ êահմանադրության համապատասխան հոդվածներում փոփոխություններ և լրացումներ մտցնելու համար մշակված, վերը նշված սկզբունքային առաջարկությունները (առաջարկություններ **1., 2., 3., 4., 5., 6.**) շարադրելուց հետո, §ԱßË³ïáõÃÛ³Ý**¦** հաջորդ` II. և III. հատվածներում ***հանգամանորեն հիմնավորվել է առաջարկվող իրավական նորմերի Սահմանադրությամբ արտացոլման կենսական անհրաժեշտությունը և օրինաչափականությունը :***

Անհրաժեշտ է նշել, որ այդ առաջարկությունները իրենց բնույթով բաժանվում են երկու խմբերի. **Առաջին խմբին** են վերաբերում **1., 2.** և **3.** առաջարկությունները, իսկ **երկրորդ խմբին՝ 4., 5.** и **6.** առաջարկությունները:

**3.1** §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ ωßË³ïáõÃÛωÝ Յատված II-ում ***հանգամանորեն հիմնավորվել է* առաջին խմբի 1., 2.** և **3.** առաջարկություններում ***ձևավորված իրավական նորմերը Սահմանադրությամբ արտացոլման կենսական անհրաժեշտությունը և օրինաչափականությունը:*** Այդ իրավական նորմերը վերաբերում են Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, տարբեր բնույթի ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý Çñ³íáõÝùÝ»ñÁ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛամբ ամրագրմանը, ինչպես նաև պետության կողմից համապատասխան երաշխիքների սահմանմանը :

Առաջին խմբի 1., 2. և 3. առաջարկություններում ձևավորված իրավական նորմերի Սահմանադրությամբ արտացոլման կենսական անհրաժեշտության և օրինաչափականության հիմնավորումները կառուցված են **երկու** անմիջականորեն առաջացող **հարցերի պատասխանի տեսքով:**

**3.1.1** Առաջին հարցը ասում է՝ **Իսկ Ç±Ýã Ïï³ ¹³:**

Այդ հարցի հանգամանալից պատասխանը բերվում է **§ԱßË³ïáõÃÛωÝ¦** II հատվածի 2.1. կետում : Սույն Յամառոտ³·ñÇ չափս»ñի սահմանափակ լինելու պատճառով այստեղ մեջ բերենք հակիրճ նշված 2.1 կետի տեքստից մի քանի քաղվածք :

ò³ÝÏ³ó³Í Ù³ñ¹áõ Ñ³Ù³ñ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý µáí³Ý¹³ÏáõÃÛáõÝÇó å»ïù ¿ Ñ³ëÏ³Ý³ÉÇ ÉÇÝÇ ¹»åÇ áñ Ñ³ë³ñ³ÏáõÃÛáõÝ »Ýù Ù»Ýù ·ÝáõÙ, ÇÝãåÇëÇ ù³Õ³ù³Ï³Ý և ëáóÇ³É³Ï³Ý ³ñÅ»ùÝ»ñ ¿ ¹³í³ÝáõÙ Ñ³ë³ñ³ÏáõÃÛáõÝÁ, ÇÝã ¿ Ï³ñáÕ áõÝ»Ý³É ³Ù»Ý ÙÇ Ù³ñ¹ ³Û¹ Ñ³ë³ñ³ÏáõÃÛ³Ý Ù»ç, ÇÝãåÇëÇ Çñ³Ï³Ý ëáóÇ³É³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý »ñ³ßËÇùÝ»ñ, ÇÝãå»ë Ý³և Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ ³å³ÑáíÙ³Ý և ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ ³Ýíï³Ý·áõÃÛ³Ý »ñ³ßËÇùÝ»ñ »Ý ÁÝÓ»éÝíáõÙ Ýñ³Ý ::

Մ³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ ³Û¹ Çñ³íáõÝùÝ»ñÁ, ³Ùñ³·ñí»Éáí ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝáõÙ, ÏÑ³Ý¹Çë³Ý³Ý áñå»ë Ñ³ëï³ïáõÝ, ³ÝÏ³åï»ÉÇ, ûñ»Ýùáí և ¹³ï³ñ³Ýáí µ³½Ù³ÏáÕÙ³ÝÇáñ»Ý å³ßïå³Ýí³Í: ²Ûë ³éáõÙáí Ï³ñևáñ ÝßßÝ³ÏáõÃÛáõÝ áõÝÇ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý áõÕÕ³ÏÇ Ý»ñ·áñÍáõÃÛáõÝÁ և Ýñ³ ¹ñáõÛÃÝ»ñÇ ÷á÷áËáõÃÛ³Ý ³ÝÑÝ³ñÇÝáõÃÛáõÝÁ ³é³Ýó µáõÝ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý ÷á÷áËáõÃÛ³Ý:
ØÇ³Å³Ù³Ý³Ï Ïµ³ñÓñ³Ý³ Ï³é³í³ñáõÃÛ³Ý և ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý ³ÛÉ Ù³ñÙÇÝÝ»ñÇ å³ï³ëË³Ý³ïíáõÃÛáõÝÁ Ýßí³Í µÝ³·³í³éÝ»ñáõÙ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ñ³Ù³ñ:

**3.1.2** ºñÏñáñ¹ Ñ³ñóÁ, áñ Ï³ñáÕ ¿ ³Ûëï»Õ Í³·»É, Ñ»ï¨Û³ÉÝ ¿՝

**ÞëÏ áñù³Ýá±í  ¿ Ýå³ï³Ï³Ñ³ñÙ³ñ ³ñ¹Ç å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ ÓԱ³íáñí³Í Ù³ñ¹áõ ³Û¹ Ýáñ Çñ³íáõÝùÝ»ñÁ ³Ùñ³·ñ»É ÐÐ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝáõÙ:**

²é³í»É Աë, »Ã» Ñ³ßíÇ ³éÝ»Ýù, áñ ãÝ³Û³Í Ýñ³Ý, áñ í»ñçÇÝ ï³ëÝ³ÙÛ³ÏÝ»ñáõÙ Ù³ñ¹áõ í»ñÁ Ýßí³Í Çñ³íáõÝùÝ»ñÇ ³å³ÑáíÙ³ÝÁ áõÕÕí³Í Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÁ ³ñ¹»Ý ÇëÏ É³ÛÝáñ»Ý ³ñï³óáÉí»É »Ý ½³ñ·³ó³Í »ñÏñÝ»ñÇ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ûñ»ÝùÝ»ñáõÙ և ³ÛÉ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý ÷³ëï³ÃÕÃ»ñáõÙ, այնուամենայնիվ, ³Û¹ Çñ³íáõÝùÝ»ñÁ ¹»éևս առկա չեն ½³ñ·³ó³Í »ñÏñÝ»ñÇ ¹³ë³Ï³Ý ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ (áñáÝù, Ç ¹»å, ëï»ÕÍí»É »Ý ÙÇ ù³ÝÇ ï³ëÝ³ÙÛ³Ï և ÝáõÛÝÇëÏ Ñ³ñÛáõñ³ÙÛ³Ï ³é³ç) և միգուցե դեռ ներգրավված չէն Կ»ÝïñáÝ³Ï³Ý և Արև»ÉÛ³Ý ºíñáå³ÛÇ áñáß »ñÏñÝ»ñի Å³Ù³Ý³Ï³ÏÇó ºíñáå³Ï³Ý ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñի ëï»ÕÍման գործընթացներում ::

²Û¹ Ñ³ñóÇÝ å³ï³ëË³Ý»Éáõ Ñ³Ù³ñ դիտարկվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ աßË³ïáõÃÛաÝ II հատվածի 2.2 կետում մենք Ñ³ñÏ³¹ñí³Í  ¿ÇÝù ³Ý¹ñ³¹³éÝ³É ù³Õ³ù³ÏñÃáõÃÛ³Ý ½³ñ·³óÙ³Ý ÁÝÃ³óùáõÙ ³é³ç³ó³Í ժամանակի  պատվիրանով թելադրվող  Ù³ñ¹áõ Ýáñ Ï»Ýë³Ï³Ý å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÇ ÑÇÙ³Ý íñ³ Ýáñ Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ å³ñµ»ñ³µ³ñ ÓԱ³íáñÙ³Ý և ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ ¹ñ³Ýó ³Ùñ³·ñÙ³Ý բազմադարյան ÙÇç³½·³ÛÇÝ åñ³ÏïÇÏ³ÛÇÝ (³ÝïÇÏ ժամանակներից մինչև մեր օրերը):

Դրա հետ մեկտեղ նշվել է նաև, որ, ëÏë³í 1948Ã. Ø²Î-Ç ÏáÕÙÇó ÁÝ¹áõÝí³Í Ø³ñ¹áõ Çñ³íáõÝùÝ»ñÇ Ñ³ÙÁÝ¹Ñ³Ýáõñ հռչակագրից,  Ù³ñ¹áõ և քաղաքացու  Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ ù³ñï³·ñ³óáõó³ÏÁ ³ÝÁÝ¹Ñ³ï ընդÉ³ÛÝվáõÙ է:

Վերլուծվեցին ÜÇó³ÛáõÙ ¥üñ³ÝëÇ³¤ ·³.³ÃÝ³ÅáÕáíÇ Å³Ù³Ý³Ï ÁÝ¹áõÝí³Í ºíñáå³Ï³Ý ØÇáõÃÛ³Ý ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÇ հռչակագրում Ñéã³Ïíած ÑÇÙÝ³ր³ր  Çñ³íáõÝùÝ»ñÁ :

ºÉÝ»Éáí Ù»ñ Ýå³ï³ÏÝ»ñÇó, Ê³ñïÇ³ÛÇ համապատասխան µ³ÅÇÝÝ»ñáõÙ Ýßí³Í Ï³ñԱáñ³·áõÛÝ ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÇó մենք մանրամասն վերլուծեցինք **§³Ýíï³Ý·áõÃÛ³Ý Çñ³íáõÝùը¦** §³½³ïáõÃÛáõÝÝ»ñ¦ µ³ÅÝից և **§³ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Çñ³íáõÝùը¦** ¥Ýáñ Çñ³íáõÝù ¿¤**,** §ù³Õ³ù³óÇÝ»ñÇ  Çñ³íáõÝùÝ»ñ¦ µ³ÅÝից:

Զմտնելով վերլուծուցյան մանրամասնության մեջ, ստորև մեջ բերենք մի քանի քաղվածք **§ԱßË³ïáõÃÛաÝ¦** II հատ.,վածի վերը նշված 2.2 կետից:

**§²Ýíï³Ý·áõÃÛ³Ý å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÁ¦** ³ÏïÇí և ·»ñ³ÏßÇé ·áñÍáÝ »Ý Ñ³Ý¹Çë³ÝáõÙ, áñÁ ÙáµÇÉÇ½³óÝáõÙ ¿ ûñ·³ÝÇ½ÙÇ ÙÇçáóÝ»ñÁ ÙÇ³ÛÝ Çñ³Ï³Ý í³Ûñ³Ñ»Õ Çñ³íÇ×³ÏÝ»ñáõÙ, ³ÛÝ ¿` å³ï»ñ³½Ù, ï³ñ»ñ³ÛÇÝ, ï»ËÝ³ÍÇÝ, ¿ÏáÉá·Ç³Ï³Ý, իսկ այժմյան իրողություններում նաև կենսանաբանական µÝáõÛÃÇ ³Õ»ïÝ»ñ, Ñ³ñÓ³ÏáõÙÝ»ñ, ³Û¹ ÃíáõÙ ³Ñ³µ»Ïã³Ï³Ý ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñ, ëå³éÝ³ÉÇùÝ»ñ Çñ³íáõÝùÇÝ, Ñ³ë³ñ³Ï³Ï³Ý Ï³ñ·ÇÝ, ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·ÇÝ, ÑÇí³Ý¹áõÃÛáõÝ, Ý»íñá½, Ñ»ÕÇÝ³ÏáõÃÛ³Ý ³ÝÏáõÙ, »ñÏ³ñ³ïև í³Ýñ Çñ³íÇ×³Ï: ²Ýíï³Ý·áõÃÛ³Ý å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÁ ³é³í»É  ëáõñ  »Ý ¹³éÝáõÙ  Çñ³Ï³Ý ëå³éÝ³ÉÇùÇ ³é³ç³óÙ³Ý ¹»åùáõÙ, áñÁ Ù³ñ¹Ï³Ýó Ù»Í³Ù³ëÝáõÃÛ³Ý Ùáï é»·ñ»ëÇ³ ¿ ³é³ç³óÝáõÙ ³Ù»Ý³µ³ñÓñ Ï³ñ·Ç å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÇó (áñáß³ÏÇ

³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ և Çñ³íáõÝùÝ»ñÇ ë³ÑÙ³Ý³÷³ÏáõÙ) ¹»åÇ ³Ýíï³·áõÃÛ³Ý ³í»ÉÇ áõÅ»Õ å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÁ:

¸ñ³Ý Ñ³Ù³ÝÙ³Ýáñ»Ý Ù³ñ¹Ï³Ýó Ù»Í³Ù³ëÝáõÃÛáõÝÁ å³ïñ³ëï ¿ ë³ÑÙ³Ý³÷³Ï»É Çñ»Ýó áñáß³ÏÇ å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÁ (áõï»ëïÝ»ñÇ áñáß³ÏÇ ï»ë³ÏÝ»ñÁ, áñáß ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñÁ, Ñ³×áõÛùÝ»ñÁ և ³ÛÉÝ) Ñ³ÝáõÝ Çñ»Ýó ³éáÕç ½·³Éáõ å³Ñ³ÝçÙáõÝùÇ :

Նշվել է, որ ք³Õ³ù³óÇÝ»ñÁ Çñ³íáõÝù áõÝ»Ý Ñáõë³É Çñ»Ýó å»ïáõÃÛáõÝÇó, áñ Ý³ ÏÝí³½»óÝÇ Ýñ³Ýó ßñç³å³ïáÕ éÇëÏ»ñÁ, Ïå³ßïå³ÝÇ Çñ»Ýó ëå³éÝ³ÉÇùÝ»ñÇó և Ïï³ ³Ýíï³Ý·áõÃÛ³Ý ½·³óÙáõÝù, ãë³ÑÙ³Ý³÷³Ï»Éáí Ýñ³Ýó ÑÇÙÝ³ï³Ý ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÁ և ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñÁ, »Ã» Ýñ³Ýù Ñ³Ù³å³ï³ëË³ÝáõÙ »Ý Çñ³íáõÝùÇÝ:

*Ինչպես նշված է վերև` **3.1.1** »ÝÃ³կետի վերջին մասում.*

§Մ³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ ³Û¹ Çñ³íáõÝùÝ»ñÁ, ³Ùñ³·ñí»Éáí ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝáõÙ, ÏÑ³Ý¹Çë³Ý³Ý áñå»ë Ñ³ëï³ïáõÝ, ³ÝÏ³åï»ÉÇ, ûñ»Ýùáí և ¹³ï³ñ³Ýáí µ³½Ù³ÏáÕÙ³ÝÇáñ»Ý å³ßïå³Ýí³Í: ²Ûë ³éáõÙáí Ï³ñևáñ Ýß³Ý³ÏáõÃÛáõÝ áõÝÇ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý áõÕÕ³ÏÇ Ý»ñ·áñÍáõÃÛáõÝÁ և Ýñ³ ¹ñáõÛÃÝ»ñÇ ÷á÷áËáõÃÛ³Ý ³ÝÑÝ³ñÇÝáõÃÛáõÝÁ ³é³Ýó µáõÝ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý ÷á÷áËáõÃÛ³Ý¦:

§ØÇ³Å³Ù³Ý³ï Ïµ³ñÓñ³Ý³ Ï³é³í³ñáõÃÛ³Ý և ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý ³ÛÉ Ù³ñÙÇÝÝ»ñÇ å³ï³ëË³Ý³ïíáõÃÛáõÝÁ Ýßí³Í µÝ³·³í³éÝ»ñáõÙ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ñ³Ù³ñ¦

**Վերոշարադրյալը առավել օրախնդրական է COVID-19 համաճարակի հետևանքով ստեղծված այժմյան իրողություններում, չնայած այդքան էլ միարժեք չի ընկալվում, ինչի մասին վկայակոչում են բազմաթիվ բողոքի գործողություններ, որոնք անց են կացվում շատ երկրների բնակչության մի մասի կողմից COVID-19 համաճարակի վտանգներից քաղաքացիներին պաշտպանելու համար կառավարությունների կողմից ընդունված սոցիալ-տնտեսական և իրավական միջոցների դեմ:**

**Իսկ դա, իր հերթին, վկայակոչում է 2022թ. և հետագա տարիներին գործընկերների հետ համատեղ օրենսդրության համապատասխան բաժինների կատարելագործմանը ուղղված հետազոտությունների ընդլայնման նպատակահարմարության վերաբերյալ, կա՛մ §Սահմանադրությունը և անվտանգությունը¦ քննարկվող աշխատության շրջանակներում, կա՛մ EUR-OPA համաձայնագրի աջակցությամբ իրականացվող այլ զուգահեռ աշխատանքների շրջանակներում՝ հաշվի առնելով ներկայիս իրողությունները, որոնք ձևավորվել են COVID-19 համաճարակի հետևանքով և հանգեցրել են արտակարգ իրավիճակներից քաղաքացիների պաշտպանությանը վերաբերող նոր իրավական փաստաթղթերի ստեղծմանը և գոյություն ունեցողների սրբագրմանը:**

**Սա առավել նպատակահարմար է՝ հաշվի առնելով, որ նոր իրավական փաստաթղթերի ստեղծման և գոյություն ունեցողների սրբագրման գործընթացները 2020-2021 թթ. հաճախակի իրականացվել են COVID-19 համաճարակի խիստ ճնշման, ժամանակի սահմանափակումների և COVID-19 համաճարակի հետագա զարգացման և հնարավոր վերափոխումների հետ կապված իրադարձությունների ընթացքին վերաբերող բազմաթիվ անորոշությունների առկայության պայմաններում:**

Ամփոփելով նշենք, որ երկրորդ հարցին տրված պատասխանները համոզիչ կերպով ցույց տվեցին վերը նշված սկզբունքային առաջարկությունների ժամանակակից սահմանադրություններում արտացոլելու կենսական անհրաժեշտությունը (առաջին խմբի 1., 2., 3. առաջարկություններ), որոնք վերաբերում են Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու կենսագործունեության անվտանգության ապահովման և տարբեր բնույթի արտակարգ իրավիճակներից կյանքի, առողջության և գույքի պաշտպանությանը վերաբերող իրավունքների ամրագրմանը, ինչպես նաև պետության կողմից համապատասխան երաշխիքների սահմանմանը:

Դա առավել սկզբունքային է և կենսականորեն անհրաժեշտ է Հայաստանի համար, հաշվի առնելով նրա աշխարհաքաղաքական և աշխարհագրական դիրքավորումը, այդ թվում ծովին անմիջական ելքի բացակայությունը, ինչը լայնածավալ արտակարգ իրավիճակների ժամանակ երկիրը և իր բնակչությունը ավելի խոցելի է դարձնում, ինչպես նաև 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի կործանիչ երկրաշարժի դասեւը:

**3.2** Ինչ վերաբերում է դիտարկվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և աÝíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ աßË³ïáõÃÛաÝ I-ին հատվածում շարադրված **երկրորդ խմբի 4, 5 և 6 առաջարկություններում ձևավորված իրավական նորմերին,** ապա ***Սահամանադրությամբ դրանց ամրագրման անհրաժեշտության հիմնավորումը*** հանգամանալից շարադրված է §ԱßË³ïáõÃÛաÝ¦ III հատվածում :

Üßí³Í ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñÁ (որոնք բերվում են նաև սույն Համառոտագրի Հատված I 2-րդ մասում) í»ñ³µ»ñáõÙ »Ý ûñ»Ýë¹ñáõÃÛ³Ý ßñç³Ý³ÏÝ»ñáõÙ ³ñï³Ï³ñ· իրավիճակների կառավարման համակարգերի հիմնադրման գործընթացների, ինչպես նաև ³ñï³Ï³ñ· ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ û·ï³·áñÍÙ³Ý (ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý ¨ Çñ³Ï³Ý³óÙ³Ý) գործընթացների Ï³é³í³ñÙ³ÝÁ համաձայն քաղաքացիական ³ñï³Ï³ñ· իրավիճակների կառավարման բնագավառի օրենսդրության մշակման և կիրառման հիմքում դրված **ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í հիմնական ëÏ½µáõÝùÝ»ñÇ և ã³÷áñáßÇãÝ»ñÇ (§*êïáÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ*¦):**

Դիտարկվող §ԱßË³ïáõÃÛաÝ¦ 3.2.2 (3) կետում մանրամասն բերվում և վերլուծվում են վերոնշյալ ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í հիմնական ëÏ½µáõÝùÝ»ñÁ և ã³÷áñáßÇãÝ»ñÁ : Ելնելով վերոնշյալ

գործընթացները Ï³é³í³ñելիս այդ հիմնական ëÏ½µáõÝùÝ»ñÇ պահանջներին հետևելու կենսական կարևորությունից և դրանց առանցքային դերից մեր հետազոտություններում, նպատակահարմար է հակիրճ քննարկել դրանք ստորև, սույն Համառոտագրի Հատված I-ի 3.2.1 »ÝÃ³կետում:

**3.2.1 *ø³Õ³ù³óÇ³Ï³Ý ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ կառավարման Ñ³Ù³Ï³ñ·»ñÇ ÑÇÙÝ³¹ñÙ³Ý և ûñ»Ýë¹ñáõÃÛ³Ý ßñç³Ý³ÏÝ»ñáõÙ ³ñï³Ï³ñ· լիազորությունների օգտագործման (ïñ³Ù³¹ñÙ³Ý, »ñÏ³ñ³óÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý) ընթացակարգերի կառավարման* ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñÁ և ã³÷áñáßÇãÝ»ñÁ (§êïáÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ¦):**

î³ñµ»ñ Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñÇ Ï³é³í³ñÙ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇ ÙÇçև ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñáõÙ Ó»éÝ³ñÏíáÕ ÙÇçáóÝ»ñÇ Ï³Ù ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ և Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³ñ Ï³½Ù³Ï»ñå³Ï³Ý å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý µ³ßËÙ³Ý ï³ñµ»ñáõÃÛ³Ý å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ, ï³ñµ»ñ å»ïáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ûñ»ÝùÝ»ñáõÙ **Ñ³Ù³ÝÙ³Ý** ¿ ¹ñ³Ýó áõÕÕí³ÍáõÃÛáõÝÁ µáÉáñ ù³Õ³ù³óÇÝ»ñÇ Çñ³íáõÝùÝ»ñÇ Ñ³Ù³å³ï³ëË³Ý å³ßïå³ÝáõÃÛ³ÝÁ և ÙÇ³Å³Ù³Ý³Ïª Ï³é³í³ñáõÃÛáõÝÝ»ñÇÝ և Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñÇ ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý ³ÛÉ Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇÝ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï»ñåáí Ñ³Ï³½¹»Éáõ Ñ³Ù³ñ µ³í³Ï³Ý³ã³÷ ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³ÝÁ **(³é³çÇÝ ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝù)**£

²Û¹ ûñ»ÝùÝ»ñÇ **»ñÏñáñ¹ ÙÇ³íáñáÕ ·ÇÍÝ** ³ÛÝ ¿, áñ ÁÝ¹Ñ³Ýáõñ ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Ñ»ï Ù»Ïï»Õ, áñáÝù Çñ³Ï³Ý³óíáõÙ »Ý ³ÛÝ ï³ñ³ÍùáõÙ, áõñ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ¿ Ùïóíáõ, ³ÝÏ³Ë ³ÛÝ Ñ³Ý·³Ù³ÝùÝ»ñÇó, áñáÝù ÑÇÙù »Ý Í³é³Û»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ Ñ³Ù³ñ, Ñëï³Ï ï³ñµ»ñáõÃÛáõÝ ¿ ë³ÑÙ³ÝíáõÙ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·ÇÝ ëå³éÝ³óáÕ ³ÝÙÇç³Ï³Ý íï³Ý·Ç ¹»åùáõÙ Ó»éÝ³ñÏíáÕ Ñ³ïáõÏ ÙÇçáóÝ»ñÇ և ³ÛÉ µÝáõÛÃÇ ¥µÝ³Ï³Ý, ï»ËÝ³ÍÇÝ և ³ÛÉÝ¤ É³ÛÝ³Í³í³É ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ í»ñ³óÙ³Ý Å³Ù³Ý³Ï Ó»éÝ³ñÏíáÕ ÙÇçáóÝ»ñÇ ÙÇçև **(»ñÏñáñ¹ ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝù):**

Üßí³Í ûñ»ÝùÝ»ñÇ **»ññáñ¹ ÙÇ³íáñáÕ ·ÇÍÁ** ³ÛÝ ³ñ¹ÛáõÝ³í»ï ÑëÏáÕáõÃÛ³Ý Ù»Ë³ÝÇ½ÙÝ»ñÇ ³éÏ³ÛáõÃÛáõÝÝ ¿, áñÝ Çñ³Ï³Ý³óíáõÙ ¿ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý (Ý»ñÏ³Û³óáõóã³Ï³Ý) ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇ ÏáÕÙÇó ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ Ï³é³í³ñÙ³Ý áõÕÕáõÃÛ³Ùµ ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ ³ñï³Ï³ñ· ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ **(»ññáñ¹ ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝù)**£

ì»ñÁ Ýßí³Í ûñ»Ýë¹ñáõÃÛ³Ý **ևë Ù»Ï Ï³ñևáñ³·áõÛÝ ÙÇ³íáñáÕ ·ÇÍÝ** ³ÛÝ ¿, áñ Ý³ Çñ Ù»ç å³ñáõÝ³ÏáõÙ ¿ ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÇ ·áïáõÙ Ù³ñ¹áõ ·ïÝí»Éáõ և ·áñÍáÕáõÃÛáõÝÝ»ñÇ Ñ³Ý·³Ù³ÝùÝ»ñÇ µ³ó³éÇÏ ³é³ÝÓÝ³Ñ³ïÏáõÃÛáõÝÝ»ñáí ÑÇÙÝ³íáñí³Í, ***Ý³Ë³å»ë Ù³Ýñ³½ÝÇÝ Ï»ñåáí Ùß³Ïí³Í, ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í և µÝ³Ïãáõ ÃÛ³ÝÁ, ·áñÍ³¹Çñ և ûñ»Ýë¹Çñ ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇÝ Ï³ÝË³í Ñ³ÛïÝÇ*** Çñ³í³Ï³Ý Ñ³ïáõÏ ÝáñÙ»ñ, áñáÝù ûñ»ÝùÇ áõÅ áõÝ»Ý և ë³ÑÙ³ÝáõÙ »Ý µáÉáñ Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñÇ Ï³é³í³ñÙ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇ, Ó»éÝ³ñÏáõÃÛáõÝÝ»ñÇ, ÑÇÙÝ³ñÏÝ»ñÇ և Ï³½Ù³Ï»ñåáõÃÛáõÝÝ»ñÇ Çñ³íáõÝùÝ»ñÁ,

å³ñï³Ï³ÝáõÃÛáõÝÝ»ñÁ ¨ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý Ñ³ïáõÏ Ï³ÝáÝ³Ï³ñ·Á, ÇÝãå»ë Ý³¨ µÝ³ÏãáõÃÛ³Ý ·ïÝí»Éáõ ¨ Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý Ï³ÝáÝÝ»ñÁ ³ÛÝ ï³ñ³ÍùáõÙ, áõñ Ùïóíáõ٠¿ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ **(ãáññáñ¹ ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝù)**£

ÆÝã í»ñ³µ»ñáõ٠¿ **áõÃ ÑÇÙÝ³Ï³Ý ã³÷áñáßÇãÝ»ñÇÝ**, ³å³ å³ïÏ»ñ³óáõÙ Ï³½Ù»Éáõ Ñ³Ù³ñ Ýå³ï³Ï³Ñ³ñÙ³ñ ¿ ëïáñ¨ µ»ñ»É ¹ñ³ÝóÇó Ã»Ïáõ½¨ Ñ»ï¨Û³É **Ù»ÏÁ£**
²ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñáõÙ Ï³é³í³ñÙ³Ý Ï³½Ù³Ï»ñå³Ï³Ý å³ï³ëË³Ý³ïíáõÃÛáõÝÁ å»ïù ¿ ¹ñíÇ Ï³é³í³ñÙ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇ ÑÝ³ñ³íáñÇÝ ã³÷ ëïáñÇÝ Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñÇ íñ³ **(3-ñ¹ ã³÷áñáßÇã)**£

**3.2.2** Դիտարկվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ ¨ ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ աßË³ïáõÃÛաÝ 3.2.2 (3) կետում վերոնշյալ ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñÇ ¨ ã³÷áñáßÇãÝ»ñÇ մանրամասն դիտարկումից և վերլուծությունից հետո, §ԱßË³ïáõÃÛաÝ¦ հաջորդ` 3.2.3 կետում քննարկվորմ են ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Ñ³ëÏ³óáõÃÛáõÝÁ, ÙïóÙ³Ý Ýå³ï³ÏÝ»ñÁ ¨ å³ÛÙ³ÝÝ»ñÁ**:**

Որպիսզի §ԱßË³ïáõÃÛաÝ¦ Չատված III-ի վերոնշյալ և հաջորդող կետերում հանգամանալից շարադրված հիմնավորումները դարձնել ավելի հասկանալի և համոզիչ, դրանք բերվում են 1, 2, 3, 4 и 5-րդ հարցերի պատասխանի տեսքով: Չարցերը առաջանում են մեր կողմից արված սկզբունքային առաջարկությունների և ՉՉ 2-րդ Սահմանադրության համապատասխան հոդվածների միջև տարաձայնությունների քննարկումից, ինչպես նաև հարուցված են Սահմանադրության այդ նույն հոդվածների առանձին նորմերի միջև հակասություններով:

Ակներևության համար նպատակահարմար է բերել այդ հարցերը ստորև` Չամառոտագրի սույն կետում`

**1¤** ³ñ¹Ûá±ù ·áÛáõÃÛáõÝ áõÝÇ ëïÇåáÕ³Ï³Ý ³ÝÑñ³Å»ßïáõÃÛáõÝ Ñ³Ûï³ñ³ñ»Éáõ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·ÇÝ ëå³éÝ³óáÕ ³ÝÙÇç³Ï³Ý íï³Ý·Ç ¹»åùÇó µ³óÇ Ý³¨ **µÝ³Ï³Ý, ï»ËÝ³ÍÇÝ, էկոլոգիական, կենսաբանական և** ³ÛÉ µÝáõÛÃÇ É³ÛÝ³Í³í³É ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ ¹»åùáõÙ,

**2¤** ÇÝãáõ± ¨ ÇÝãå»±ë å»ïù ¿ §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ ÙÇçáó³éáõÙÝ»ñÁ¦ ë³ÑÙ³Ýí»Ý ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ñ³ïáõÏ ûñ»Ýùáí ¨ ³ÝÑñ³Å»ßïáõÃÛ³Ý ¹»åùáõÙ ëÏëí»Ý Çñ³Ï³Ý³óí»É ³ÝÑ³å³Õ,

**3¤** ÇÝãáõ± ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ Ñ³ïáõÏ ÝÇëïÇ ³ÝÑ³å³Õ ·áõÙ³ñÙ³Ý ÷áË³ñ»Ý ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ùµ å»ïù ¿ ë³ÑÙ³ÝíÇ Ýßí³Í ÝÇëïÇ ·áõÙ³ñáõÙÁ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ Ù³ëÇÝ ÐÐ Ý³Ë³·³ÑÇ Ññ³Ù³Ý³·ñÇ Ññ³å³ñ³ÏÙ³Ý å³ÑÇó áã áõß ù³Ý 24 Å³ÙáõÙ ¥áñÁ, Ç ¹»å, ãÇ µ³ó³éáõÙ ÝÇëïÇ ³ÝÑ³å³Õ ·áõÙ³ñáõÙÁ¤,

**4¤** ÇÝãáõ± »Ýù Ù»Ýù ³é³ç³ñÏáõÙ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ùµ ë³ÑÙ³Ý»É ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ Ñ³Ù³ñ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñ, ÇëÏ §Ý³Ë³ï»ëí³Í ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Çñ³Ï³Ý³óáõÙÁ ã»ÕÛ³É Ñ³Ûï³ñ³ñ»Éáõ¦ ÷áË³ñ»Ý Ù»ñ Ùáï ËáëùÁ í»ñ³µ»ñáõ٠¿ §³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý í»ñ³óÙ³ÝÁ¦, ¨ ãÇ± Ï³ñ»ÉÇ, ³ñ¹Ûáù, ³Û¹ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÁ ë³ÑÙ³Ý»É ûñ»Ýùáí, ³ÛÉ áã Ã» ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ùµ:

**5¤** ÇÝãáõ± ãÇ Ï³ñ»ÉÇ Ñ³Ûï³ñ³ñ»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ Ù Çñ³Ï³Ý³óÝ»É §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ ÙÇçáó³éáõÙÝ»ñ¦ ³é³Ýó §²ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Ù³ëÇÝ¦ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ñ³ïáõÏ ûñ»ÝùÇ ³éÏ³ÛáõÃÛ³Ý:

ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ñá¹í³ÍÝ»ñÇ (Ðá¹í³Í 55, Ï»ï 14; Ðá¹í³Í 44; Ðá¹í³Í 43; Ðá¹í³Í 117, Ï»ï 6) ÙÇçù ·áÛáõÃÛáõÝ áõÝ»óáÕ Ñ³Ï³ëáõÃÛáõÝÝ»ñÁ, ÇÝã± ¿ Ñ»ïùáõÙ µ³ñÓñ³·áõÛÝ Çñ³í³µ³Ý³Ï³Ý áõÅ áõÝ»óáÕ ÷³ëï³ÃÕÃÇ í»ñÁ Ýßí³Í Ñá¹í³ÍÝ»ñáõÙ ë³ÑÙ³Ýí³Í ÝáñÙ»ñÇó:

ÆÝã± ¿ ëå³ëáõÙ ³ÛÝ »ñÏñÇÝ, Ýñ³ µÝ³Ïãáõ ÃÛ³ÝÁ, ·áñÍ³¹Çñ Ù ûñ»Ýë¹Çñ ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇÝ, »ñµ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ Çñ³Ï³Ý³óíáõÙ »Ý áã Ã» ïÇåÇÏ ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó Ã»É³¹ñíáÕ, Ý³Ë³å»ë Ù³Ýñ³½ÝÇÝ Ï»ñåáí Ùß³Ïí³Í Ù ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í, ù³Õ³ù³óÇÝ»ñÇÝ Ù ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý µáÉáñ Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñÇ Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ Ï³ÝË³í Ñ³ÛïÝÇ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÇ íñ³ Ë³ñëËí³Í ÙÇçáó³éáõÙÝ»ñÁ, ³ÛÉ §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ¦ ûñ»Ýùáí ãë³ÑÙ³Ýí³Í ÙÇçáó³éáõÙÝ»ñ:

3.2.3 Վերոնշյալ հարցերի հանգամանալից պատասխանները բերվում են քննարկվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ Ù ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ աßË³ïáõÃÛաÝ 3.2 կետի համապատասխան ենթակետերում: Այդ պատասխանների շրջանակներում բերվող (տրված) հիմնավորումները, ինչպես նաև §ԱßË³ïáõÃÛունÝում¦ քննարկվող ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñÁ Ù ã³÷áñáßÇãÝ»ñÁ (տես նաև սույն Համառոտագրի 3.2.1 »ÝÃ³կետը) թելադրում են Սահմանադրության համապատասխան հոդվածներում §ԱßË³ïáõÃÛաÝ¦ I-ին Հատվածում առաջարկվող փոփոխություններն ու լրացումները (տես նաև սույն §Համառոտ բնութագրի¦ I-ին Հատվածի 2-րդ մասը) Սահմանադրության համապատասխան հոդվածներում ³ñï³óáÉ»Éու կենսական անհրաժեշտությունը:

Միևնույն ժամանակ, ի տարբերություն 1), 2), 3) և 4-րդ հարցերի պատասխանների, որոնք սպառիչ կերպով տրված են §Աշխատության¦ III Հատվածի 3.2 կետում, 5) հարցի պատասխանը ձևավորվել է §Աշխատության¦ IV Հատվածում այլ հիմքերի վրա և այլ նպատակ է հետապնդում: Սա մասամբ նշված է սույն Համառոտագրի I Հատվածի 1-ին մաւում` 2008 թվականի մարտի 1-ի իրադարձություններից հետո ստեղծված, ինչպես նաև ներկայիս պահանջներով թելադրված մեր առջև դրված խնդիրներից առաջինը դիտարկելիս:

**ՀԱՏՎԱԾ II**

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ, ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԿՅԱՆՔԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՒՅՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ

## ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## *ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎՈՎ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ*

**(Հետազոտությունները անց են կացվել և առաջարկությունները մշակվել են 06.12. 2015 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ 3-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ և դրա նախագծի վերլուծության հիման վրա)**

**ՄԱՍ 1**

**1.1** Ներկա փուլում` **2021** թ. անց են կացվել հետազոտություններ և մշակվել են համապատասխան առաջարկություններ 06 12.2015 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ գործող` 3-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ (որպես խորհրդարանական կառավարման ձևով երկրի Սահամանադրության) վերլուծության հիման վրա:

Միաժամանակ, **2021** թ., ինչպես նշված է Ներածականում և սույն Համառոտագրի I-ին Հատվածի 2-րդ Մասում, վերամշակվել են, լրացվել և նորին խմբագրվել են 2020 թ. անց կացված հետազոտությունների արդյունքները, հաշվի առնելով այժմյան իրողությունները Ù³ñ¹áõ և քաղաքացու Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· իրավիճալներից ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý բնագավառում:

Իսկ **2020** թ., ինչպես նշված է վերև, I-ին Հատվածում, անց են կացվել համապատասխան հետազոտություններ և մշակվել են կոնկրետ առաջարկություններ 27.11.2005 թ. հանրաքվեյով ընդունված ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ (որպես կիսանախագայական կառավարման ձևով երկրի Սահամանադրության), դրա նախագծի և համապատասխան օրենսդրության հանգամանալից վերլուծության հիման վրա :

Ստորև, Համառոտագրի սոյն` II Հատվածում բերվում են սկզբունքային առաջարկություններ ուղղված արտացոլելու *խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների* ժամանակակից Սահմանադրություններում Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý Çñ³íáõÝùÝ»ñի արտացոլմանը (ÐÐ 3-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ վերլուծության հիման վրա):

Վերոնշյալ առաջարկությունները, ինչպես և նրանք, որ բերված են սույն Համառոտագրի I-ին Հատվածում, ***վերաբերում են*** նաև Ýßí³Í Çñ³íáõÝùÝ»ñÇ »ñ³ßË³íáñÙ³Ýը և »ñÏñÇ ïÝï»ë³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõóí³ÍùÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý µÝ³·³í³éÝ»ñáõÙ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ñ³Ù³ñ Ï³é³í³ñáõÃÛáõÝÝ»ñÇ å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý µ³ñÓñ³óÙ³ÝÁ ***áõÕÕí³Í,*** ÇÝãå»ë Ý³և ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³ñ ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ, և ³Û¹ ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ, Ñ³Ù³Ó³ÛÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÝ»ñÇ և ûñ»Ýë¹ñáõÃÛ³ÝÁ ³ÙµáÕçáõÃÛ³Ùµ ³é³Í, û·ï³·áñÍÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý (Ý»ñÏ³Û³óáõóã³Ï³Ý) ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇ ÏáÕÙÇó ·áñÍáõÝ ÑëÏáÕáõÃÛ³Ý մեխանիզմների սահմանմանը և կատարելագործմանը ***áõÕÕí³Í*** ժամանակակից սահմանադրություններում հատուկ իրավական նորմերի **³Ùñ³·ñմանը:**

Ինչպես և սպասվում էր, ելնելով ՀՀ 2-րդ և 3-րդ Սահմանադրությունների համապատասխան հոդվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու սկզբունքային առաջարկությունների էությունից և բնույթից (կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևեր ունեցող երկրների սահմանադրությունների օրինակով), որոնք շարադրված են վերև՝ սույն Համառոտագրի I-ին Հատվածի 2-րդ Մասում և ստորև՝ II Հատվածի 2-րդ Մասում, ինչպես նաև ելնելով ժամանակակից սահմանադրությունների մշակման հիմքում ընկած հիմնական դրույթների և սկզբունքների նմանությունից, մարդու և քաղաքացու իրավունքներին վերաբերող առաջարկությունները, հիմնականում նույնական են:

Ինչ վերաբերում է վերը նշված հատուկ իրավական նորմերին, ապա Սահմանադրության տարբեր բաժիններում դրանց ձևակերպման և բաշխման որոշակի տարբերությունը պայմանավորված է երկու գործոնով.

- տարբեր երկրների համապատասխան օրենքներում արտակարգ իրավիճակներում տարբեր մակարդակների իշխանությունների միջև ձեռնարկվող միջոցառումների կամ լիազորությունների բաշխման, ինչպես նաև կազմակերպական պատասխանատվության միջև տարբերություններով:
- կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևեր ունեցող երկրների սահմանադրությունների կառուցվածքների միջև տարբերություններով:

Այս ամենի հետ մեկտեղ, տարբեր երկրների համապատասխան օրենքներում *նույնական է* ¹ñ³Ýó áõÕÕí³ÍáõÃÛáõÝÁ µáÉáñ ù³Õ³ù³óÇÝ»ñÇ Çñ³íáõÝùÝ»ñÇ Ñ³Ù³å³ï³ëË³Ý å³ßïå³ÝáõÃÛ³ÝÁ և ÙÇ³Å³Ù³Ý³Ï³ Ï³é³í³ñáõÃÛáõÝÝ»ñÇÝ և Ñ³Ù³å³ï³ëË³Ý Ù³Ï³ñ¹³ÏÝ»ñÇ ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý ³ÛÉ Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇÝ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï»ñåáí Ñ³Ï³½¹»Éáõ Ñ³Ù³ñ µ³í³Ï³Ý³ã³÷ ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³ÝÁ£

Այս օրենքներում ևս մեկ միավորող գիծ է՝ արդյունավետ վերահսկողության մեխանիզմների առկայությունը, որն իրականացվում է օրենսդրական (ներկայացուցչական) իշխանությունների կողմից արտակարգ իրավիճակների կառավարման ուղղությամբ գործադիր իշխանության մարմիններին արտակարգ լիազորությունների տրամադրման, շարունակման և իրականացման վերաբերյալ:

U³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝáõÙ ³ñï³óáÉվող Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ վերը նշված Çñ³íáõÝùÝ»ñÁ ենթակա չեն լինի փոփոխման, կդառնան անօտարացվող և լիակատար պաշտպանված կլինեն օրենքով և դատարանով : Այս առումով U³ÑÙ³Ý³¹ñáõÃÛաÝ ուղղակի գործողությունը ունի կարևորության բարձր աստիճան:

Ինչ վերաբերում է օրենսդրական (ներկայացուցչական) իշխանությունների կողմից արտակարգ իրավիճակների կառավարման ուղղությամբ գործադիր իշխանության մարմիններին արտակարգ լիազորությունների տրամադրման, շարունակման և իրականացման վերաբերյալ արդյունավետ վերահսկողության վերոնշյալ մեխանիզմներին, ապա այդ լիազորությունները չեն կարող տեղ գտնել համապատասխան օրենքներում, եթե դրանք արտացոլված չեն Սահմանադրության մեջ: ***Օրենսդրական (ներկայացուցչական) իշխանությունը չի կարող այդ լիազորությունները ինքն իրեն վերապահել օրենքների միջոցով, եթե այդ լիազորությունները նախատեսված չեն Սահմանադրությամբ:***

**1.2** Հաշվի առնելով կլիմայի գլոբալ փոփոխության և դրա հետ կապված տարբեր բնական աղետների աճի, ինչպես նաև COVID-19 համաճարակի հետևանքով ստեղծված ներկայիս իրողությունները, առաջացել է կառավարման համակարգերի արդյունավետությունը բարելավելու կենսական անհրաժեշտություն՝ դրանք համահունչ դարձնելով 21-րդ դարի մարտահրավերներին:

Կառավարման համակարգի արդյունավետության երաշխիքներից է օրենսդրության մեջ, այդ թվում՝ Սահմանադրության մեջ, իշխանության բոլոր թևերի և բոլոր մակարդակների կառավարման մարմինների լիազորությունների հավասարակշռությունը: Իսկ դրան կարելի է հասնել օրենսդրության ամբողջությամբ առած, այդ թվում՝ Սահմանադրության կատարելագործման միջոցով՝ հաշվի առնելով ժամանակակից իրողությունները և համահունչ նոր մարտահրավերներին:

Սույն նախագծի մշակման արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան որոշում է կայացվել ստեղծել նոր կամ կատարելագործել գործող Սահմանադրությունը, ինչի կապակցությամբ ստեղծվում են համապատասխան կառույցներ, որոնք նախատեսում են մշակման գործընթացում հասարակության բոլոր շերտերի ընդգրկումը:

Եվ հարցը միայն և ոչ այնքան այն է, թե սահմանադրություններից որն է (խորհրդարանական կամ կիսանախագահական կառավարման ձև ունեցող երկրների համար) ընտրվելու որպես Սահմանադրության մշակման հիմք (թեև Հայաստանի համար ներկա փուլում նախընտրելի է թվում կիսանախագահական կառավարման ձև ունեցող երկրի համար Սահմանադրությունը):

Առավել կարևոր է դառնում կառավարման համակարգի արդյունավետության երաշխիքների ապահովումը՝ օրենսդրության մեջ և, ամենից առաջ, Սահմանադրությունում, իշխանության բոլոր թևերի և բոլոր մակարդակների կառավարման մարմինների, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում, լիազորությունների հավասարակշռման մեխանիզմների սահմանմամբ:

**1.3** Բոլոր վերոնշյալով էլ պայմանավորված է այս նախագծի մշակման անհրաժեշտությունը: Նախագծի շրջանակներում 2021 թվականին մշակված §Առաջարկությունները¦ *(խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների Սահմանադրությունների համար)* տրված են ստորև՝ Համառոտագրի սույն II Հատվածի 2-րդ Մասում:

Նպատակահարմար է վերը նշված §Առաջարկությունները¦ շարադրել ամբողջությամբ և միայն դրանից հետո հակիրճ հիմնավորել առաջարկվող իրավական նորմերի Սահմանադրությամբ արտացոլման կենսական անհրաժեշտությունն ու օրինաչափականությունը, նույնպես, ինչպես դա արվեց վերև՝ սույն Համառոտագրի I-ին Հատվածի 2-րդ Մասում բերվող §Առաջարկությունների¦ դեպքում *(կիսանախագահական կառավարման ձև ունեցող երկրների Սահմանադրությունների համար):*

**ՄԱՍ 2**

## ՍԿԶԲՈՒՆՔԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ÐÐ 3-ñ¹ êԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ՄՏՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

***(խորհրդարանական կառավարման ձևով երկրի Սահամանադրության օրինակով)***

**1.** Սահմանադրության **ԳԼՈՒԽ 2-ում`** §***ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***¦ մտցնել հետևյալ լրացուցիչ հոդվածը (պայմանականորեն որպես հոդված **24`.,** կամ էլ` հոդված **57`**, կամ էլ` որպես այլ համապատասխան համարով հոդված):

**Đá¹í³Í 24`. (57`.) Կ»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ ³å³ÑáíÙ³Ý, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և áõÝ»óí³ÍùÇ å³ßïå³ÝáõÃÛ³Ý Çñ³íáõÝùը:**

Յուրաքանչյուր ոք ունի Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ ³å³ÑáíÙ³Ý, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և áõÝ»óí³ÍùÇ å³ßïå³ÝáõÃÛ³Ý Çñ³íáõÝù: ***)**

**2.** Սահամանադրության վերոնշյալ **ԳԼՈՒԽ 2-ի 57 Հ**ոդվածի 5.կետի 3) ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

**Հոդված 57. Աշխատանքի ընտրության ազատությունը և աշխատանքային իրավունքները**

5. Պարտադիր կամ հարկադիր աշխատանքն արգելվում է: Պարտադիր կամ հարկադիր աշխատանք չի համարվում .

3) յուրաքանչյուր աշխատանք, որը պահանջվում է բնակչության ÏÛ³ÝùÇÝ կամ բարօրությանն սպառնացող արտակարգ իրավիճակների ժամանակ, **եթե դա ակնհայտ սպառնալիքի չի ենթարկում աշխատանքը կատարողի կյանքը:**

**ԳԼՈՒԽ 3-ի.** §*ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*¦ **Հոդված 86-**ում մտցնել հետևյալ լրացուցիչ կետը (պայմանականորեն որպես կետ 8., համապատասխանաբար փոխելով հաջորդ կետերի համարակալումը) :

**3. ԳԼՈՒԽ 3-ի.** §*ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ*¦ **Հոդված 86-**ում մտցնել հետևյալ լրացուցիչ կետը (պայմանականորեն որպես կետ 8, համապատասխանաբար փոխելով հաջորդ կետերի համարակալումը)

**Հոդված 86. Պետության քաղաքականության հիմնական նպատակները**

Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են՝

8) **բնակչության Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ ³å³ÑáíուÙը, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó քաղաքացիների ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և áõÝ»óí³ÍùÇ å³ßïå³ÝáõÃÛուÝը, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñում պետության տնտեսական և քաղաքական կառույցների գործունեության կայունության ³å³ÑáíուÙը,**

**4. ԳԼՈՒԽ 6-ում՝** §*ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ*¦ **Հոդված 146.**-ի 2.-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**..............................................**

***)** Այստեղ և այսուհետև **թավատառով** նշված են ÐÐ 3-ñ[1] Սահմանադրության (խորհրդարանական կառավարման ձևով երկրի Սահմանադրության օրինակով) համապատասխան հոդվածներում փոփոխություններ եվ լրացումներ մտցնելու համար մեր կողմից առաջարկվող փոփոխությունները եվ լրացումները :

**Հոդված 146. Կառավարության կարգավիճակը և գործառույթները**

2. Կառավարությունը իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, **այդ թվում ·ÇïáõÃÛ³Ý, ÏñÃáõÃÛ³Ý, Ùß³ÏáõÛÃÇ, ³éáÕç³å³ÑáõÃÛ³Ý, ëáóÇ³É³Ï³Ý ³å³ÑáíáõÃÛ³Ý, µÝáõÃÛ³Ý å³Ñå³ÝáõÃÛ³Ý, ÇÝãå»ë Ý³և ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó »ñÏñÇ µÝ³Ïãáõ ÃÛ³Ý, ï³ñ³ÍùÇ, ÝÛáõÃ³Ï³Ý և å³ïÙ³-Ùß³ÏáõÃ³ÛÇÝ ³ñÅ»ùÝ»ñÇ å³ßïå³ÝáõÃÛ³Ý, å»ïáõÃÛ³Ý ïÝï»ë³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõó í³ÍùÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý** µÝ³·³í³éÝ»ñáõÙ:

**5. ԳԼՈՒԽ 4-ում՝** §**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ**¦ **Հոդված 120.** շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**Հոդված 120. Աñï³Ï³ñ· դրությունը**

1. Սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, **Ï³Ù µÝ³Ï³Ý, ï»ËÝ³ÍÇÝ, էկոլոգիական, կենսաբանական և ³ÛÉ µÝáõÛÃÇ É³ÛÝ³Í³í³É ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñáõÙ, áñáÝù Ñ³Ý·»óÝáõÙ »Ý Ï³Ù Ï³ñáÕ »Ý Ñ³Ý·»óÝ»É Ù³ñ¹Ï³ÛÇÝ µ³½Ù³ÃÇí ½áÑ»ñÇ, Ù³ñ¹Ï³Ýó ³éáÕçáõÃÛ³ÝÁ áõ ßñç³Ï³ ÙÇç³í³ÛñÇÝ Ñ³ëóíáÕ ½·³ÉÇ íÝ³ëÇ, Ëáßáñ ÝÛáõÃ³Ï³Ý Ïáñáõëï»ñÇ, µÝ³Ïãáõ ÃÛ³Ý Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý µÝ³Ï³ÝáÝ å³ÛÙ³ÝÝ»ñÇ ¿³Ï³Ý í³ïÃ³ñ³óÙ³ÝÁ և å»ïáõÃÛ³Ý Ï³ñևáñ³·áõÛÝ ïÝï»ë³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõÛóÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý »ñÏ³ñ³ïև Ë³÷³ÝÙ³ÝÁ,**Կառավարությունը Ñ³Ûï³ñ³ñáõÙ ¿ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ, ձեռնարկում է **ûñ»Ýùáí ë³ÑÙ³Ýí³Í,** իրավիճակից բխող ÙÇçáó³éáõÙÝ»ñ և ³Û¹ Ù³ëÇÝ áõÕ»ñÓáí ¹ÇÙáõÙ ¿ ÅáÕáíñ¹ÇÝ :

2. Աñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ Ñ³Ûï³ñ³ñելáւ դեպքում **ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում աñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ մասին Կառավարության որոշումը Ý»ñÏ³Û³óíáõÙ ¿** Çñ³íáõÝùÇ áõÅáí ·áõÙ³ñíáÕ ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ Ñ³ïáõÏ ÝÇëïÇ **Ñ³ëï³ïÙ³ÝÁ:**

3. ²½·³ÛÇÝ ÄáÕáíÁ Ï³ñáÕ ¿ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ **áñáßáõÙ ÁÝ¹áõÝ»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ Ù³ëÇÝ Կառավարության որոշման Ñ³ëï³ïÙ³Ý և ¹ñ³ ·áñÍáÕáõÃÛ³Ý »ñÏ³ñ³óÙ³Ý Ù³ëÇÝ,** վերացնել ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝը, կամ ã»ÕÛ³É Ñ³Ûï³ñ³ñ»É ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛաÝ իրավական ռեժիմով նախատեսված և **Կառավարության համապատասխան որոշման մեջ նշված** ÙÇçáó³éáõÙÝ»ñÇ Çñ³Ï³Ý³óáõÙÁ:

4. ²ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Çñ³í³Ï³Ý é»ÅÇÙÁ (**Ï³ÝáÝ³Ï³ñ·Á**), **ÇÝãå»ë Ý³և ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ÙïóÝ»Éáõ Կառավարության որոշումը ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ ÏáÕÙÇó Ñ³ëï³ïÙ³Ý, ¹ñ³ ·áñÍáÕáõÃÛ³Ý »ñÏ³ñ³óÙ³Ý և ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý í»ñ³óÙ³Ý Ù³ëÇÝ ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ áñáßÙ³Ý, ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý é»ÅÇÙÇ** (**Ï³ÝáÝ³Ï³ñ·Ç**) **·áñÍáÕáõÃÛ³Ý ÁÝÃ³óùáõÙ å³ñÉ³Ù»Ýï³Ï³Ý (ËáñÑñ¹³ñ³Ý³Ï³Ý) ÑëÏáÕáõÃÛ³Ý Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ï³ñ·Á և Ù»Ë³ÝÇ½ÙÝ»ñÁ** ë³ÑÙ³ÝíáõÙ »Ý ûñ»Ýùáí, որն ընդունվում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ :

**ՄԱՍ 3**

Համառոտագրի սույն II Հատվածի նախորդ 2-րդ Մասում բերվող Հայաստանի Հանրապետության գործող, 3-րդ Սահմանադրության համապատասխան հոդվածներում փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկություններն ուղեկցվում են խորհրդարանական կառավարման ձև ունեցող երկրների Սահմանադրություններում մեր առաջարկություններում ձևավորված իրավական նորմերի ամրագրման կենսական անհրաժեշտության և իրավաչափականության հիմնավորումներով: Այդ հիմնավորումների որոշակի մասն իր հիմնական հատկանիշներով նույնական է նրանց, որոնք համառոտակի բերվում են վերև, սույն Համառոտագրի I-ին Հատվածիում և վերաբերում են *կիսանախագահական կառավարման ձև* ունեցող երկրների Սահմանադրություններին:

Բնականաբար, հակիրճության համար ստորև, Համառոտագրի II Հատվածի սույն 3-րդ Մասի համապատասխան կետերում, մեր հիմնավորումները մեջբերելիս, որոշ դեպքերում նպատակահարմար է հղում կատարել այն նույնական հիմնավորումներին, որոնք բերվում են սույն Համառոտագրի I-ին Հատվածում (համապատասխան ճշգրտումներով և լրացումներով):

**3.1** Խոսքը, առաջին հերթին, վերաբերում է ***այն հիմնավորումներին, որոնք հիմնված են*** քաղաքացիական արտակարգ իրավիճակների օրենսդրության մշակման և կիրառման համար հիմք հանդիսացող ***միջազգայնորեն ընդունված հիմնական սկզբունքների և չափորոշիչների վրա*** **(§Ստոկհոլմյան առաջարկություններ¦):**

Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերի հիմնման և օրենսդրության շրջանակներում արտակարգ լիազորությունների տրամադրման և օգտագործման վերոնշյալ միջազգայնորեն ընդունված հիմնական սկզբունքներն ու չափորոշիչները համառոտակի քննարկվում են 3.2 կետի համապատասխան ենթակետերում (սույն Համառոտագրի I Հատված, Մաս 3.):

**3.2** Սա ներառում է նաև ***Սահմանադրությամբ այն իրավական նորմերի արտացոլման կենսական անհրաժեշտության և օրինաչափականության մանրամասն հիմնավորումները,*** **որոնք վերաբերում են Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու** կենսագործունեության անվտանգության ապահովման և տարբեր բնույթի արտակարգ իրավիճակներից կյանքի, առողջության և գույքի պաշտպանությանը վերաբերող **իրավունքների ամրագրմանը,** ինչպես նաև պետության կողմից **համապատասխան երաշխիքների սահմանմանը:**

Սահմանադրությամբ մեր **1.**, **2.**, **3.** և **4.** առաջարկություններում (որոնք շարադրված են վերև՝ Համառոտագրի *սույն* II Հատվածի 2-րդ Մասում**)**, ձևակերպված վերոնշյալ իրավական նորմերի արտացոլման կենսական անհրաժեշտության և օրինաչափականության հիմնավորումները կառուցվել են ուղղակիորեն ծագող **երկու հարցերի պատասխանների տեսքով** *(նույնական են սույն Համառոտագրի I-ին Հատվածի, 3-րդ Մասի, 3.1 կետում քննարկվածներին):*

**3.2.1** Առաջին հարցը ասում է՝ **Իսկ Ç±Ýã Ïï³ ¹³:**

**3.2.2** ºñÏñáñ¹ Ñ³ñóÁ, áñ Ï³ñáÕ ¿ ³Ûëï»Õ Í³·»É, Ñ»ïևÛ³ÉÝ ¿`

**Իëï áñù³Ýá±í ¿ Ýå³ï³Ï³Ñ³ñÙ³ñ ³ñ¹Ç å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ Óև³íáñí³Í Ù³ñ¹áõ ³Û¹ Ýáñ Çñ³íáõÝùÝ»ñÁ ³Ùñ³·ñ»É ÐÐ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝáõÙ:**

**Առաջին հարցի** հանգամանալից պատասխանը տրված է մեր հիմնական §Աշխատության¦ II Հատվածի 2.1 կետում: Սույն Համառոտագրի սահմանափակ ծավալի պատճառով

Ամփոփագրի I-ին Բաժնի, 3-րդ Մասի, 3.1 կետի, 3.1.1 ենթակետում բերվում են մի քանի քաղվածք հիմնական §Աշխատության¦ նշված 2.1 կետի տեքստից, որոնք լույս են սփռում այս խնդրի վրա:

**Երկրորդ հարցին** պատասխանելու համար *(ինչպես ավելի հանգամանորեն շարադրված է սույն Ամփոփագրի I Բաժնի, 3-րդ Մասի, 3.1 կետի, 3.1.2 ենթակետում)* մենք Ñ³ñÏ³ñí³Í ¿ÇÝù ³Ý¹ñ³¹³éÝ³É ù³Õ³ù³ÏñÃáõÃÛ³Ý ½³ñ·³óÙ³Ý ÁÝÃ³óùáõÙ ³é³ç³ó³Í, ժամանակի պատվիրանով թելադրվող Ù³ñ¹áõ Ýáñ Ï»Ýë³Ï³Ý å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÇ ÑÇÙ³Ý íñ³ Ýáñ Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ å³ñµ»ñ³µ³ñ Ó¨³íáñÙ³Ý և ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ ¹ñ³Ýó ³Ùñ³·ñÙ³Ý ÙÇç³½·³ÛÇÝ åñ³ÏïÇÏ³ÛÇÝ (³ÝïÇÏ ժամանակներից մինչև մեր օրերը) :

Դրա հետ մեկտեղ նշվել է նաև, որ ëÏë³Í 1948Ã. Ø²Î-Ç ÏáÕÙÇó ÁÝ¹áõÝí³Í Ø³ñ¹áõ Çñ³íáõÝùÝ»ñÇ Ñ³ÙÁÝ¹Ñ³Ýáõñ հռչակագրից, Ù³ñ¹áõ և քաղաքացու Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ ù³ñï³·ñ³óáõó³ÏÁ ³ÝÁÝ¹Ñ³ï ընդÉ³ÛÝվáõÙ ¿:
Վերլուծվեցին ÜÇó³ÛáõÙ ¥üñ³ÝëÇ³¤ ·³.³ÃÝ³ÅáÕáíÇ Å³Ù³Ý³Ï ÁÝ¹áõÝí³Í ºíñáå³Ï³Ý ØÇáõÃÛ³Ý ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÇ հռչակագրում Ñéã³Ïíած ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÁ :
ºÉÝ»Éáí Ù»ñ Ýå³ï³ÏÝ»ñÇó, Ê³ñïÇ³ÛÇ համապատասխան µ³ÅÇÝÝ»ñáõÙ Ýßí³Í Ï³ñևáñ³·áõÛÝ ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÇó մենք մանրամասն վերլուծեցինք **§³Ýíï³Ý·áõÃÛ³Ý Çñ³íáõÝùը¦,** §³½³ïáõÃÛáõÝÝ»ñ¦ µ³ÅÝից և §**³ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Çñ³íáõÝùը**¦ ¥Ýáñ Çñ³íáõÝù ¿¤**,** §ù³Õ³ù³óÇÝ»ñÇ Çñ³íáõÝùÝ»ñ¦ µ³ÅÝից:

Երկրորդ հարցին պատասխանելու ընթացքում տրված վերլուծության արդյունքները և հիմնավորումները *(որոնք բավականին հանգամանորեն շարադրված են* սույն *Ամփոփագրի I Բաժնի, 3-րդ Մասի, 3.1 կետի, 3.1.2 ենթակետում)* համոզիչ կերպով ցույց են տվել վերը նշված սկզբունքային առաջարկությունները ժամանակակից սահմանադրություններում արտացոլելու կենսական անհրաժեշտությունը (առաջարկություններ **1., 2., 3.** և **4.**), որոնք վերաբերում են Սահմանադրությամբ մարդու և քաղաքացու կենսագործունեության անվտանգության ապահովման և տարբեր բնույթի արտակարգ իրավիճակներից կյանքի, առողջության և գույքի պաշտպանությանը վերաբերող իրավունքների ամրագրմանը, ինչպես նաև պետության կողմից համապատասխան երաշխիքների սահմանմանը:

**Երրորդ խմբի հիմնավորումները** վերաբերում են վերև` սույն Ամփոփագրի II Բաժնի, 2-րդ Մասում բերված մեր **5-րդ առաջարկության մեջ ձևավորված իրավական նորմերին** (ամրագրելու համար կառավարման խորհրդարանական ձև ունեցող երկրների սահմանադրություններում, օրինակ. ՀՀ 3-րդ Սահմանադրության օրինակով):

**3.3 Երրորդ խմբի հիմնավորումները** վերաբերում են վերև՝ սույն Համառոտագրի II Հատվածի, 2-րդ Մասում բերված մեր **5-րդ առաջարկության մեջ ձևավորված իրավական նորմերին** (ամրագրելու համար կառավարման խորհրդարանական ձև ունեցող երկրների սահմանադրություններում, օրինակ. ՀՀ 3-րդ Սահմանադրության օրինակով):

**5-րդ առաջարկությունը** վերաբերում է *ՀՀ 3-րդ Սահմանադրության*« **ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԳԼՈՒԽ 4-**ի, **Արտակարգ դրությունը Հոդված 120**-ի նոր խմբագրությամբ շարադրմանը:

Սահմանադրությամբ առաջարկվող իրավական նորմերի ամրագրման կենսական անհրաժեշտության և օրինաչափականության հիմնավորումները հանգամանորեն ներկայացված են §Սահմանադրությունը և անվտանգությունը¦ մեր հիմնական աշխատության III հատվածում:

Նշված իրավական նորմերը վերաբերում են օրենսդրության շրջանակներում արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերի հիմնադրման գործընթացների, ինչպես նաև ³ñï³Ï³ñ· ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ û·ï³·áñÍÙ³Ý (ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý) գործընթացների Ï³é³í³ñÙ³ÝÁ համաձայն քաղաքացիական ³ñï³Ï³ñ· իրավիճալների կառավարման բնագավառի օրենսդրության մշակման և կիրառման հիմքում դրված, **ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í հիմնական ëÏ½µáõÝùÝ»ñÇ և ã³÷áñáßÇãÝ»ñÇ (êïáÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ):**
Դիտարկվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ աßË³ïáõÃÛաÝ 3.2.2 (3) կետում վերոնշյալ ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í ÑÇÙÝ³Ï³Ý ëÏ½µáõÝùÝ»ñÇ և ã³÷áñáßÇãÝ»ñÇ մանրամասն դիտարկումից և վերլուծությունից հետո, §ԱßË³ïáõÃÛաÝ¦ հաջորդ՝ 3.2.3 կետում քննարկվում են ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛ³Ý Ñ³ëÏ³óáõÃÛáõÝÁ, ÙïóÙ³Ý Ýå³ï³ÏÝ»ñÁ և å³ÛÙ³ÝÝ»ñÁ**:**

Արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերի հիմնադրման և օրենսդրության շրջանակներում ³ñï³Ï³ñ· ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý և û·ï³·áñÍÙ³Ý ÙÇç³½·³ÛÝáñ»Ý ÁÝ¹áõÝí³Í հիմնական ëÏ½µáõÝùÝ»ñը և ã³÷áñáßÇãÝ»ñը համառոտ քննարկվել են նաև վերև՝ սույն Համառոտագրի I-ին Հատվածի, 3-րդ Մասի, 3.2 կետի համապատասխան ենթակետերում:

Որպիսզի §ԱßË³ïáõÃÛաÝ¦ Հատված III-ի վերոնշյալ և հաջորդող կետերում հանգամանորեն շարադրված հիմնավորումները դարձնել ավելի հասկանալի և համոզիչ, դրանք բերվում են հարցերի պատասխանների տեսքով: Հարցերի, որոնք առաջանում են մեր կողմից արված սկզբունքային առաջարկությունների և *ՀՀ 3-րդ Սահմանադրության* **ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ԳԼՈՒԽ 4-**ի, **Արտակարգ դրությունը Հոդված 120**-ի բովանդակության միջև առկա որոշ տարաձայնությունների (հակասությունների) քննարկումից:

Ակներևության համար նպատակահարմար է ստորև մեջբերել այդ հարցերից մի քանիսը, որոնք վերաբերում են նաև ՀՀ 3-րդ Սահմանադրության վերոնշյալ **Հոդված 120**-ին :

1¤ Աñ¹Ûá±ù ·áÛáõÃÛáõÝ áõÝÇ ëïÇåáÕ³Ï³Ý ³ÝÑñ³Å»ßïáõÃÛáõÝ Ñ³Ûï³ñ³ñ»Éáõ ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ï³ñ·ÇÝ ëå³éÝ³óáÕ ³ÝÙÇç³Ï³Ý íï³Ý·Ç ¹»åùÇó µ³óÇ Ý³և **µÝ³Ï³Ý, ï»ËÝ³ÍÇÝ, էկոլոգիական, կենսաբանական և** ³ÛÉ µÝáõÛÃÇ É³ÛÝ³Í³í³É ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ ¹»åùáõÙ:

2) ՒÝãáõ± և ÇÝãå»±ë å»ïù ¿ §Çñ³íÇ×³ÏÇó Ã»É³¹ñíáÕ ÙÇçáó³éáõÙÝ»ñÁ¦ ë³ÑÙ³Ýí»Ý ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý Ñ³ïáõÏ ûñ»Ýùáí և ³ÝÑñ³Å»ßïáõÃÛ³Ý ¹»åùáõÙ ëÏëí»Ý Çñ³Ï³Ý³óí»É ³ÝÑ³å³Õ:

3¤ ՒÝãáõ± ²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ Ñ³ïáõÏ ÝÇëïÇ ³ÝÑ³å³Õ ·áõÙ³ñÙ³Ý ÷áË³ñ»Ý ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ùµ å»ïù ¿ ë³ÑÙ³ÝíÇ Ýßí³Í ÝÇëïÇ ·áõÙ³ñáõÙÁ Կառավարության կողմից ³ñï³Ï³ñ· ¹ñáõÃÛáõÝ հայտարարելու å³ÑÇó áã áõß ù³Ý 24 Å³ÙáõÙ ¥áñÁ, Ç ¹»å, ãÇ µ³ó³éáõÙ ÝÇëïÇ ³ÝÑ³å³Õ ·áõÙ³ñáõÙÁ¤:

4¤ ՒÝãáõ± »Ýù Ù»Ýù ³é³ç³ñÏáõÙ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ùµ ë³ÑÙ³Ý»É **²½·³ÛÇÝ ÄáÕáíÇ Ñ³Ù³ñ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñ,** և ãÇ± Ï³ñ»ÉÇ, ³ñ¹Ûáù, ³Û¹ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÁ ë³ÑÙ³Ý»É ûñ»Ýùáí, ³ÛÉ áã Ã» ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ùµ:

## ՀԱՏՎԱԾ III

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ ևս մեկ անգամ նշենք, որ աշխատանքի այս փուլում հիմնավորվել է ներքոհիշյալի անհրաժեշտությունը՝

➢ ³ñï³óáÉ»É Հայաստանի Հանրապետության, ºíñáå³ÛÇ ÊáñÑñ¹Ç Ëáßáñ íï³Ý·Ý»ñÇ Ñ³Ù³Ó³ÛÝ³·ñÇ ³Ý¹³Ù »ñÏñÝ»ñÇ, ինչպես նաև այլ շահագրգիռ պետությունների Å³Ù³Ý³Ï³ÏÇó ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ ³ÛÅÙÛ³Ý å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ Óև³íáñíáÕ Ù³ñ¹áõ և ù³Õ³ù³óáõ Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý Ýáñ Çñ³íáõÝùÝ»ñÁ;

➢ ³Ùñ³·ñ»É Ñ³ïáõÏ Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñ, áõÕÕí³Í Ï³é³í³ñáõÃÛáõÝÝ»ñÇ å³ï³ëË³Ý³ïíáõÃÛ³Ý µ³ñÓñ³óÙ³ÝÁ Ýßí³Í Çñ³íáõÝùÝ»ñÇ »ñ³ßË³íáñÙ³Ý, ÇÝãå»ë Ý³և »ñÏñÇ ïÝï»ë³Ï³Ý և ù³Õ³ù³Ï³Ý Ï³éáõóí³ÍùÝ»ñÇ Ï³ÛáõÝ ·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý µÝ³·³í³éÝ»ñáõÙ å»ï³Ï³Ý ù³Õ³ù³Ï³ÝáõÃÛ³Ý Ùß³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý Ñ³Ù³ñ;

➢ ³Ùñ³·ñ»É Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñ, áõÕÕí³Í ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇ ³ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Ñ³Ù³ñ ·áñÍ³¹Çñ ÇßË³ÝáõÃÛ³Ý Ù³ñÙÇÝÝ»ñÇÝ Éñ³óáõóÇã ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ ïñ³Ù³¹ñÙ³Ý, ß³ñáõÝ³ÏÙ³Ý և Çñ³Ï³Ý³óÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ, ÇÝãå»ë Ý³և ³Û¹ ÉÇ³½áñáõÃÛáõÝÝ»ñÇ, Ñ³Ù³Ó³ÛÝ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ë³ÑÙ³Ý³¹ñ³Ï³Ý ûñ»ÝùÝ»ñÇ և ûñ»Ýë¹ñáõÃÛ³ÝÁ ³ÙµáÕçáõÃÛ³Ùµ առած, û·ï³·áñÍÙ³Ý ÝÏ³ïÙ³Ùµ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý (Ý»ñÏ³Û³óáõóã³Ï³Ý) ÇßË³ÝáõÃÛáõÝÝ»ñÇ ÏáÕÙÇó ·áñÍáõÝ ÑëÏáÕáõÃÛ³Ý մեխանիզմների սահմանմանը և կատարելագործմանը:

**1.** §Սահմանադրությունը և անվտանգությունը¦ աշխատությունում կոնկրետ առաջարկություններ են արված Հայաստանի Հանրապետության 2-րդ և 3-րդ Սահմանադրությունների համապատասխան հոդվածներում փոփոխություններ և լրացումներ մտցնելու վերաբերյալ՝ որպես համապատասխանաբար կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերով երկրների Սահմանադրությունների, ուղղված վերոնշյալ երաշխիքների անձեռնմխելիության ապահովմանը:

**Առաջարկությունները մշակվել են՝ հաշվի առնելով եվրոպական արժեքները և հիմնվելով քաղաքացիական ³ñï³Ï³ñ· իրավիճակների կառավարման բնագավառի օրենսդրության մշակման և կիրառման հիմքում դրված, միջազգայնորեն ընդունված հիմնական սկզբունքների և չափորոշիչների վրա *(§êïáÑáÉÙÛ³Ý ³é³ç³ñÏáõÃÛáõÝÝ»ñ¦).***

**2020** թ. անց են կացվել համապատասխան հետազոտություններ և մշակվել են կոնկրետ առաջարկություններ ÐÐ 2-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý (որպես կիսանախագայական կառավարման ձևով երկրի Սահամանադրության) և համապատասխան օրենսդրության Ñ³Ý·³Ù³Ý³ÉÇó վերլուծության հիման վրա:

Ներկա փուլում՝ **2021** թ. անց են կացվել հետազոտություններ և մշակվել են համապատասխան առաջարկություններ ÐÐ գործող՝ 3-ñ¹ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛ³Ý (որպես խորհրդարանական կառավարման ձևով երկրի Սահամանադրության) վերլուծության հիման վրա:

Միաժամանակ, **2021** թ. վերամշակվել են, լրացվել և նորին խմբագրվել են 2020 թ. անց կացված հետազոտությունների արդյունքները, հաշվի առնելով այժմյան իրողությունները Ù³ñ¹áõ և քաղաքացու իրավունքների ³å³ÑáíÙ³Ý բնագավառում Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· իրավիճակներից ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ուղղությամբ:

Մինչդեռ ժամանակակից Սահմանադրություններում մարդու վերոնշյալ իրավունքների, ապահովվող երաշխիքների և վերահսկողության մեխանիզմների արտացոլման կենսական անհրաժեշտության և օրինաչափականության **լիարժեք, հասկանալի և առավել համոզիչ հիմնավորումը** կարող է տրվել միայն **2020 և 2021 թվականներին կատարված ուսումնասիրությունների արդյունքների համալիր վերամշակման և ներդաշնակ ինտեգրման հիման վրա ստեղծված §Սահմանադրությունը և անվտանգությունը¦ հանգամանալից փաստաթղթի ամբողջական վերջնական տարբերակում**:

**Անհրաժեշտ է վերամշակել և համաձայնեցնել 2020 և 2021 թվականներին, համապատասխանաբար, կիսանախագահական և խորհրդարանական կառավարման ձևերով երկրների Սահմանադրությունների օրինակով, կատարված հետազոտությունների երկու մասերը ներդաշնակ ամբողջության մեջ**

Ցավոք, որոշ օբյեկտիվ հանգամանքների հետևանքով, ներառյալ հետազոտությունների անցկացման ժամանակի զգալի կրճատումը, 2021 թվականին չեր կարող ավարտին հասցվել այս փաստաթղթի ամբողջական վերջնական տարբերակի պատրաստումը:

**Հաշվի առնելով քննարկվող հարցերի կենսական նշանակությունը, արդեն իսկ կատարված հետազոտությունների մեծ ծավալը և դրանց արդյունքների պահանջված լինելը, անհրաժեշտ է հետազոտություններն ավարտել 2022թ. և ներկայացնել Նախագծի արդյունքները բոլոր շահագրգիռ կողմերին:**

Սույն նախագծի մշակման արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ Հայաստանի Հանրապետությունում համապատասխան որոշում է կայացվել ստեղծել նոր կամ կատարելագործել գործող Սահմանադրությունը 2022-23թ.թ., ինչի կապակցությամբ ստեղծվում են համապատասխան կառույցներ, որոնք նախատեսում են մշակման գործընթացում հասարակության բոլոր շերտերի ընդգրկումը:

Եվ հարցը միայն և ոչ այնքան այն է, թե սահմանադրություններից որն է (խորհրդարանական կամ կիսանախագահական կառավարման ձև ունեցող երկրների համար) ընտրվելու որպես Սահմանադրության մշակման հիմք: Առավել կարևոր է դառնում կառավարման համակարգի արդյունավետության երաշխիքների ապահովումը՝ օրենսդրության մեջ և, ամենից առաջ, Սահմանադրությունում, իշխանության բոլոր թևերի և բոլոր մակարդակների կառավարման մարմինների, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում, լիազորությունների հավասարակշռման մեխանիզմների սահմանմամբ:

**2.** Նպատակահարմար է նաեւ ընդլայնել **2022-2023 թթ.** գործընկերների հետ համատեղ հետազոտությունները, ուղղված օրենսդրության համապատասխան բաժինների կատարելագործմանը, կա՛մ քննարկվող §Սահմանադրությունը և անվտանգությունը¦ աշխատության շրջանակներում, կա՛մ EUR-OPA համաձայնագրի աջակցությամբ իրականացվող այլ զուգահեռ աշխատանքների շրջանակներում՝ հաշվի առնելով ներկայիս իրողությունները, որոնք ձևավորվել են COVID-19 համաճարակի հետևանքով և հանգեցրել են արտակարգ իրավիճակներից քաղաքացիների պաշտպանությանը վերաբերող նոր իրավական փաստաթղթերի ստեղծմանը և գոյություն ունեցողների սրբագրմանը:

Սա առավել նպատակահարմար է՝ հաշվի առնելով, որ նոր իրավական փաստաթղթերի ստեղծման և գոյություն ունեցողների սրբագրման գործընթացները 2020-2021 թթ. հաճախակի իրականացվել են COVID-19 համաճարակի խիստ ճնշման, ժամանակի սահմանափակումների և COVID-19 համաճարակի հետագա զարգացման և հնարավոր վերափոխումների հետ կապված իրադարձությունների ընթացքին վերաբերող բազմաթիվ անորոշությունների առկայության պայմաններում:

**3.** Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ մեր առաջարկություններում ձևակերպված ժամանակակից Սահմանադրություններում վերոնշյալ իրավական նորմերի արտացոլման կենսական անհրաժեշտության և օրինաչափականության հիմնավորումները կառուցվել են **երկու** անմիջականորեն առաջացող **հարցերի պատասխանի տեսքով:**

Երկրորդ հարցը, որ կարող է այստեղ ծագել, հետևյալն է՝ ** ԻëÏ áñù³Ýá±í ¿ Ýå³ï³Ï³Ñ³ñÙ³ñ ³ñ¹Ç å³ÛÙ³ÝÝ»ñáõÙ Óև³íáñí³Í Ù³ñ¹áõ ³Û¹ Ýáñ Çñ³íáõÝùÝ»ñÁ ³Ùñ³·ñ»É ÐÐ ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝáõÙ :**

²é³í»É և ë, »Ã» Ñ³ßíÇ ³éÝ»Ýù, áñ ãÝ³Û³Í Ýñ³Ý, áñ í»ñçÇÝ ï³ëÝ³ÙÛ³ÏÝ»ñáõÙ Ù³ñ¹áõ í»ñÁ Ýßí³Í Çñ³íáõÝùÝ»ñÇ ³å³ÑáíÙ³ÝÝ áõÕÕí³Í Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñÁ ³ñ¹»Ý ÇëÏ É³ÛÝáñ»Ý ³ñï³óáÉí»É »Ý ½³ñ·³ó³Í »ñÏñÝ»ñÇ Ñ³Ù³å³ï³ëË³Ý ûñ»ÝùÝ»ñáõÙ և ³ÛÉ ûñ»Ýë¹ñ³Ï³Ý ÷³ëï³ÃÕÃ»ñáõÙ, այնուամենայնիվ, ³Û¹ Çñ³íáõÝùÝ»ñÁ ¹»éևս առկա չեն ½³ñ·³ó³Í »ñÏñÝ»ñÇ ¹³ë³Ï³Ý ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ (áñáÝù, Ç ¹»å, ëï»ÕÍí»É »Ý ÙÇ ù³ÝÇ ï³ëÝ³ÙÛ³Ï և ÝáõÛÝÇëÏ Ñ³ñÛáõñ³ÙÛ³Ï ³é³ç) և միգուցե դեռ ներգրավված չէն Կ»ÝïñáÝ³Ï³Ý և Աñև»ÉÛ³Ý ºíñáå³ÛÇ áñáß »ñÏñÝ»ñի Å³Ù³Ý³Ï³ÏÇó ºíñáå³Ï³Ý ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñի ëï»ÕÍման գործընթացում::

²Û¹ Ñ³ñóÇÝ å³ï³ëË³Ý»Éáõ Ñ³Ù³ñ դիտարկվող §ê³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÁ և ³Ýíï³Ý·áõÃÛáõÝÁ¦ աßË³ïáõÃÛnւնում մենք Ñ³ñÏ³¹ñí³Í ¿ÇÝù ³Ý¹ñ³¹³éÝ³É ù³Õ³ù³ÏñÃáõÃÛ³Ý ½³ñ·³óÙ³Ý ÁÝÃ³óùáõÙ ³é³ç³ó³Í ժամանակի պատվիրանով թելադրվող Ù³ñ¹áõ Ýáñ Ï»Ýë³Ï³Ý å³Ñ³ÝçÙáõÝùÝ»ñÇ ÑÇÙ³Ý íñ³ Ýáñ Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ å³ñµ»ñ³µ³ñ Óև³íáñÙ³Ý և ë³ÑÙ³Ý³¹ñáõÃÛáõÝÝ»ñáõÙ ¹ñ³Ýó ³Ùñ³·ñÙ³Ý բազմադարյան ÙÇç³½·³ÛÇÝ åñ³ÏïÇÏ³ÛÇÝ (³ÝïÇÏ ժամանակներից մինչև մեր օրերը):

Դրա հետ մեկտեղ նշվել է նաև, որ ëÏë³Í 1948Ã. Ø²Î-Ç ÏáÕÙÇó ÁÝ¹áõÝí³Í Ø³ñ¹áõ Իñ³íáõÝùÝ»ñÇ Ð³ÙÁÝ¹Ñ³Ýáõñ Յռչակագրից, Ù³ñ¹áõ և քաղաքացու Çñ³íáõÝùÝ»ñÇ և ³½³ïáõÃÛáõÝÝ»ñÇ ù³ñï³·ñ³óáõó³ÏÁ ³ÝÁÝ¹Ñ³ï ընդÉ³ÛÝվáõÙ է:

Վերլուծվեցին ÜÇó³ÛáõÙ ¥üñ³ÝëÇ³¤ ·³.³ÃÝ³ÅáÕáíÇ Å³Ù³Ý³Ï ÁÝ¹áõÝí³Í ºíñáå³Ï³Ý ØÇáõÃÛ³Ý ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÇ հռչակագրում Ñéã³Ïíած ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÁ:

ºÉÝ»Éáí Ù»ñ Ýå³ï³ÏÝ»ñÇó, Ê³ñïÇ³ÛÇ համապատասխան µ³ÅÇÝÝ»ñáõÙ Ýßí³Í Ï³ñևáñ³·áõÛÝ ÑÇÙÝ³ր³ր Çñ³íáõÝùÝ»ñÇó մենք մանրամասն վերլուծեցինք §³**Ýíï³Ý·áõÃÛ³Ý Çñ³íáõÝùը**¦**,** §³½³ïáõÃÛáõÝÝ»ñ¦ µ³ÅÝից և §³**ñ¹ÛáõÝ³í»ï Ï³é³í³ñÙ³Ý Çñ³íáõÝùը**¦ ¥Ýáñ Çñ³íáõÝù ¿¤**,** §ù³Õ³ù³óÇÝ»ñÇ Çñ³íáõÝùÝ»ñ¦ µ³ÅÝից:

**Վերլուծության արդյունքները և բերված հիմնավորումները համոզիչ կերպով ցույց տվեցին վերը նշված Çñ³í³Ï³Ý ÝáñÙ»ñը ժամանակակից Սահմանադրություններում ³Ùñ³·ñ»Éու կենսական անհրաժեշտությունը և օրինաչափականությունը, որոնք վերաբերում են Սահմանադրությամբ** Ï»Ýë³·áñÍáõÝ»áõÃÛ³Ý ³Ýíï³Ý· å³ÛÙ³ÝÝ»ñÇ, ³ñï³Ï³ñ· Çñ³íÇ×³ÏÝ»ñÇó ÏÛ³ÝùÇ, ³éáÕçáõÃÛ³Ý և ·áõÛùÇ å³ßå³ÝáõÃÛ³Ý ³å³ÑáíÙ³Ý, ինչպես նաև

**պետության կողմից համապատասխան երաշխիքների սահմանման վերաբերյալ մարդու և քաղաքացու** Çñ³íáõÝùÝ»ñի **արտացոլմանը:**

**4.** Եզրափակելով, ևս մեկ անգամ նշում ենք, որ Ծրագրի արդյունքները կհետաքրքրեն Եվրոպայի Խորհրդի Խոշոր վտանգների համաձայնագրի անդամ պետություններին, ինչպես նաև այլ շահագրգիռ երկրներին: Առավել ևս, որ հետազոտություններն անց են կացվել, հաշվի առնելով եվրոպական արժեքները, այդ թվում` §Ստոկհոլմյան առաջարկությունները¦` քաղաքացիական ³ñï³Ï³ñ· իրավիճակների կառավարման բնագավառի օրենսդրության մշակման և կիրառման հիմքում դրված, միջազգայնորեն ընդունված հիմնական սկզբունքները և չափորոշիչները

Ստեփան Բադալյան
Խոշոր ռիսկերի կառավարման
Եվրոպական միջտարածաշրջանային գիտական և կրթական
կենտրոնի տնօրեն
Երևան, Հայաստանի Հանրապետություն

# “ՊԱՇՏՊԱՆԻՐ ՔՈ ՏԱՐԱԾՔԸ”

## ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՂԵՏՆԵՐԻ ԴԵՄ

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ ԳՈՐԾՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԻՐ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

## “Պաշտպանիր քո տարածքը” (ՊՔՏ Նախագիծ)՝ առցանց գործիք վտանգի մասին հաղորդելու և աղետները կանխարգելելու համար

*“Պաշտպանիր քո տարածքը”*՝
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ)
*կայք էջերի*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ
ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԳՈՐԾԵԼՈՒ
ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

# ՀԱՄԱՌՈՏ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ուղարկիր Քո Տարածքի Պաշտպանության Ուղղված
Քո Հաղորդագրությունը

Երևան, 2023

## 1. ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ՏԱՐԱԾՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ

**1.1 Երկրներին, նրանց առանձին մարզերին և տարածքներին ներգործող շատ բնական և այլ աղետներից հնարավոր կլիներ խուսափել, եթե նրանց տարածքները կանոնավոր կերպով պահպանվեին (նվազեցվեին հաճախ կրկնվող հավանական աղետների ռիսկերը):**

*Այդ տարածքներում ապրող շատ մարդիկ հաճախ տեղյակ էին այն ռիսկերի մասին, որոնց իրենք ենթարկվում էին, քանի որ այդ ռիսկերը ակնհայտ էին և շատ հաճախ կրկնվող:*

**Ռիսկերի հետ կապված իրավիճակների մասին մարդկանց իրազեկությունը, այնուամենայնիվ, հազվադեպ է հանգեցնում դրանց վերացմանը ուղղված օգտակար գործողությունների (միջամտության):**

*Մի կողմից,* քանի որ **տարածքների պահպանմանը (հավանական աղետների ռիսկերի նվազեցմանը) ուղղված կանխարգելիչ գործողությունները բավարար** չեն լուսաբանվում զանգվածային լրատվության միջոցների **(ԶԼՄ-ների)** կողմից: Ավելին, քանի դեռ տեղի չի ունեցել աղետը, ԶԼՄ-ներին ընդհանուր առմամբ չեն հետաքրքրում "Տեղական Բնակչության Գիտելիքները", որոնք "նորություն" են դառնում միայն աղետից հետո:

**Որպես հետևանք՝** եթե չկա լուսաբանում ԶԼՄ-ների կողմից "Տեղական Բնակչության Գիտելիքները" առկա ռիսկերի մասին դուրս են մնում կանխարգելիչ գործողություններ իրականացնելու վերաբերյալ որոշումներ ընդունելու համար պատասխանատու քաղաքական գործիչների ուշադրության տեսադաշտից, և **որոշում ընդունողները առաջնություն չեն տալիս տարացքի աջակցությանը:**

*Մյուս կողմից,* քանի որ **չկա տեղեկատվության ավտոմատ փոխանցման համակարգ** այն անձից, **որը տեղյակ է** վտանգների մասին, նրան, **ով պատասխանատու է դրանց վերացման համար:**

***Եվ երրորդ՝*** քանի որ դպրոցականները և երիտասարդությունը, ամբողջությամբ առած, համարյա չեն ներգրավված (կամ թերի են ներգրավված) տեղական վտանգների նույնականացման գործընթացներում և դրանց վերաբերյալ տեղեկատվության ավտոմատ փոխանցման համակարգերի գործունեությանը (եթե այդպիսի համակարգեր ստեղծված են):

Դրա հետ մեկտեղ, ժամանակակից պայմաններում երիտասարդները, որոնք տիրապետում են համապատասխան հմտությունների և հաջողությամբ գործում են տեղեկատվական և ինժեներական տեխնոլոգիաների ոլորտում, այն պայմաններում, եթե նրանք ձեռք բերեն անհրաժեշտ գիտելիքներ աղետների ռիսկերի նվազեցման բնագավառում, կարող են կառուցողական ներգրավվեն տեղեկատվության փոխանցման ժամանակակից տարացքային (մարզային, համայնքային) համակարգերի մշակման և արդյունավետ գործունեության ապահովման գործընթացներում՝ ինչպես աղետների վտանգների մասին հաղորդման և աղետների կանխարգելման, այնպես էլ յուրաքանչյուրի՝ իր տարացքի պաշտպանությանը և դրա կայուն զարգացման ապահովմանը ակտիվ մասնակցության համար, ինչպես նաև իրենց համայնքի (մարզի, երկրի, ամբողջությամբ առած) գործունեության տարբեր բնագավառներում հաջող գործունեության իրականացման համար անհրաժեշտ առաջնորդի հմտությունների ձեռքբերման և ամրապնդման համար:

**«Պաշտպանիր Քո Տարածքը» (ՊՔՏ)** *կայք էջի* **նպատակն է՝ հավաքել հաղորդագրություններ քաղաքացիներից և օգտատերերից՝** վտանգների առկայության հետ կապված իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են հայտնաբերվել իրենց **տարածքում (գյուղում, քաղաքում, շրջանում, մարզում)**, և **փոխանցել** դրանք ***իրավասու մարմիններին***՝ ռիսկերի նվազեցմանը և վտանգների վերացմանը ուղղված համապատասխան գործողություններ իրականացնելու, և ***տեղական ԶԼՄ–ներին***՝ հետագա գործողությունները դիտարկելու (հսկելու) համար: *******

**ՊՔՏ Կայք էջերը** աղետների **կանխարգելման արդյունավետ գործիք** դարձնելու համար կարևոր է **տեղական հասարակությանը (համայնքին) ներգրավել** ոչ միայն դրանց օգտագործմանը, այլև **դրանց ստեղծմանը:**

**1.2** Ինչպես հետևում է «Պաշտպանիր Քո Տարածքը» նախագծի (ՊՔՏ նախագիծ) տրամաբանությունից և բովանդակությունից՝ **Նախագծի հիմնական խաղացողներ (կողմեր) են** հանդիսանում՝ ***մի կողմից.*** Տեղական Քաղաքացիական պաշտպանության համապատասխան կառույցները, տեղական համայնքը և տեղական բնակչությունը, ***մյուս կողմից.*** դպրոցները (ավագ դասարանների աշակերտները և ուսուցիչները), ինչպես նաև՝ տեղական զանգվածային լրատվության միջոցները (ԶԼՄ):

Ինչպես սովորական (առօրյա) պայմաններում, այնպես էլ արտակարգ իրավիճակներում, երբ Նախագծի վերոնշյալ խաղացողները (կողմերը) բախվում են ամենօրյա կյանքում և

.........................................................

*****)** Պետք է նշել, որ ՊՔՏ կայք էջը չի փոխարինում արտակարգ իրավիճակներում (ԱԻ) ներգրավվող ինստիտուցիոնալ ծառայություններին: Այդ դեպքերում անհրաժեշտ է հաղորդել սպառնացող (անխուսափելի) վտանգի մասին՝ զանգահարելով արտակարգ իրավիճակների տեղական ծառայության համապատասխան համարներով:

տեսանելի ապագայում մարդկային գործունեության բոլոր բնագավառներում բազմաթիվ խնդիրների լուծման անհրաժեշտության հետ, **պահանջվում է իրենց շարժառիթների (մոտիվացիայի) նշանակալից ուժեղացում և գործողությունների կոնկրետացում:**

➢ ՊՔS նախագծի իրականացմանը **դպրոցների ներգրավման համար**, իբրև առաջին քայլ, **լավագույն մոտիվացիա է (շարժառիթ է) հանդիսանում՝** կոնկրետ դպրոցի վարչակազմի, ուսուցիչների, աշակերտների և նրանց ծնողների ներգրավումը իրենց դպրոցի անվտանգության հետ կապված յուրահատուկ Պիլոտային Նախագծի համատեղ իրականացմանը:

➢ Հաշվի առնելով, որ դպրոցները առավելապես տեղավորված են համայնքների տարացքներում, բնակելի թաղամասերին սերտ մոտալուտության, որտեղ, գլխավորապես, բնակվում են աշակերտների ծնողները, ՊՔS նախագծի հաջող իրականացման կարևոր բաղադրամաս է դառնում՝ **բնակչության լայն զանգվածների ներգրավումը** իբրև աղետների ռիսկերի նվազեցման գործընթացների ակտիվ մասնակիցների, ներառյալ **ըստ իրենց բնակվելու վայրի տարացքային համայնքներում**, և, ինչպես վերը նշված է՝ աշակերտների ծնողների ներգրավումը իրենց կոնկրետ դպրոցի անվտանգության հետ կապված յուրահատուկ Պիլոտային Նախագծի համատեղ իրականացմանը:

➢ ՊՔS նախագծի խնդիրներից մեկը, որը նպատակաուղղված է «Պաշտպանիր Քո Տարածքը» (ՊՔS) տարածաշրջանային Կայք էջի գործողության օպտիմիզացմանը, հանդիսանում է **տեղական զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) դրդումը՝ առավել արդյունավետ օգտագործել ՊՔS Կայք էջը,** առավել ևս, որ աշխարհի վերջին տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ շատ երկրներում անհրաժեշտ է նշանակալի կատարելագործել հակազդեցությունը խոշոր արտակարգ իրավիճակներին բոլոր երեք փուլերում. կանխարգելիչ միջոցառումների, օպերատիվ դիմակայման և վերականգնման՝ **իշխանությունների, ԶԼՄ-ների և քաղաքացիների միջև համագործակցության ուժեղացման միջոցով:**

**1.3** Ինչպես հետևում է նախորդ 1.1 և 1.2 կետերի բովանդակությունից, ժամանակակից պայմաններում հասարակությունների տարերային, տեխնածին, էկոլոգիական, կենսաբանական և այլ աղետներից խոցելիության նվազեցման և դրանց պատրաստվածության բարձրացման կարևորագույն ուղղություններից մեկն է հանդիսանում աղետների վտանգների մասին հաղորդման և դրանց կանխարգելմանն ուղղված առցանց գործիքների մշակումը և դրանց արդյունավետ գործունեության ապահովումը, որոնք ուղղված կլինեն տեղական բնակչության գիտելիքների և դպրոցների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) աղետների դեմ ներգրավման նախաձեռնմանը, արտակարգ իրավիճակներում իշխանությունների,

ԶԼՄ–ների և քաղաքացիների միջև հաղորդակցական - տեղեկատվական համագործակցության ուժեղացմանը:

**1.3.1** Այնպիսի տարացքային **առցանց գործիքների**, ինչպիսիք է **“Պաշտպանիր Քո Տարածքը (ՊՔՏ) Կայք Էջը”**, մշակման և կանոնավոր գործունեության երաշխավորման համար, որը նպատակաուղղված է տեղական բնակչության և դպրոցների ներգրավմամբ տեղական ռիսկերի մասին գիտելիքների բարձրացմանը, նախաձեռնված էր **LoKSAND** նախագիծը: **Ինչպես արդեն վերը նշված է. “Նախագծի հիմնական խաղացողներ (կողմեր) են հանդիսանում՝** *մի կողմից.* տեղական Քաղաքացիական պաշտպանության համապատասխան կառույցները, տեղական համայնքը և տեղական բնակչությունը, ***մյուս կողմից.*** դպրոցները (ավագ դասարանների աշակերտները և ուսուցիչները), ինչպես նաև՝ տեղական զանգվածային լրատվության միջոցները (ԶԼՄ):

**Խոշոր ռիսկերի կառավարման Եվրոպական միջտարածաշրջանային գիտական և կրթական կենտրոնը (այսուհետ՝ ՌԿԵԿ - ECRM), Երևան, Հայաստան իր աշխատանքը** LoKSAND ծրագրի շրջանակներում սկսել է **որպես գործընկեր - կենտրոն,** հիմնվելով **Նախագծի համակարգող – կենտրոնի (CUEPS, Ռավելո, Իտալիա)** կողմից սիրալիր կերպով ներկայացրած տեղեկատվական և մեթոդական բնույթի փաստաթղթերի վրա, հաշվի առնելով Հայաստանի յուրահատկությունները: Որոշ օբյեկտիվ պատճառների հետևանքով աշխատանքը Նախագծի վրա ՌԿԵԿ-ի կողմից 2021 թ. ընդհատվեց և **Նախագծի հետագա ֆինանսավորումը Եվրոպայի Խորհրդի Խոշոր Ռիսկերի Համաձայնագրի (այսուհետ՝ EUR-OPA) կողմից առաջարկվեց հետաձգել 2022-2023 թթ:**

**Մենք առաջարկել ենք մշակել նոր, վերափոխված պիլոտային Նախագիծ, այն է՝**

**“ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՂԵՏՆԵՐԻ ԴԵՄ”. (Տարածքային առցանց գործիքների (“Պաշտպանիր Քո Տարածքը” (ՊՔՏ) կայք էջի մշակման և արդյունավետ գործունեության ապահովման բնագավառում կառուցողական գործունեությանը դպրոցականների և ուսանողների ներգրավում տեղեկատվական և ինժեներական տեխնոլոգիաների միջոցով):**

**Բնականաբար, մեր կողմից առաջարկված, մշակվող նոր, վերափոխված պիլոտային Նախագիծը նոր որակ է ներմուծում նախորդ նախագծի հիմքում ընկած գաղափարների մշակման մեջ, և նպատակաուղղված է, առաջին հերթին, կառուցողականության և պատճառաբանվածության բարձրացմանը ներգրավելու համար դպրոցականներին և ուսանողներին տարացքային առցանց գործիքների (ՊՔՏ Կայք էջերի) գործունեության արդյունավետության բարձրացմանը՝ վտանգների մասին հաղորդման և աղետների կանխարգելման համար, իր տարացքի պաշտպանության գործում յուրաքանչյուրի պատասխանատվության բարձրացման և ակտիվ մասնակցության համար:**

Նոր Նախագծի մշակումը անց է կացվում, հաշվի առնելով **CUEPS-ի** առժեքավոր փորձը, նկատի առնելով Եվրոպական առժեքները: Սակայն աջակցության գործընթացը չի հանդիսանում միակողմանի հաղորդակցական գործընթաց, միաժամանակ դա՝ համագործակցության գործընթաց է, որը հիմնվում է հիմնահարցերի փոխանցման, փորձի և արդյունքների փոխանակման վրա:

**1.3.2 Նախագծի արդյունավետությունը առավելապես կանխորոշվելու է դպրոցականների և ուսանողների պատճառաբանվածության, կառուցողական ներգրավման և պատրաստվածության աստիճանով, ինչը հանդիսանում է կանոնավոր լուծում պահանջող խնդիր:**

*Բարեբախտաբար, Հայաստանում դպրոցական մակարդակով ստեղծված են տեղեկատվական և ինժեներական բնագավառներում հաջողությամբ գործող եզակի կառույցներ.* **"ԹՈՒՄՈ"՝ Կառուցողական Տեխնոլոգիաների Կենտրոններ և "ԱՐՄԱՏ" ինժեներական լաբորատորիաներ:**

<u>"ԹՈՒՄՈ"՝ Կառուցողական Տեխնոլոգիաների Կենտրոններ</u>

"ԹՈՒՄՈ" կենտրոնները հանդիսանում են կրթական փորձարարության տարատեսակ տեխնոլոգիաների և հորինման (դիզայնի) հատման գծում, որը համակցում է նորագույն տեխնոլոգիաները տեղական մշակութային ժառանդության հետ և ապահովում է երիտասարդ հայերին անվճար կրթությամբ: "ԹՈՒՄՈ"-յում 12-ից մինչև 18 բոլոր տարեկան խմբերի երեխաները ներգրավված են 14 ուսուցանողական նախագծերում,

ինչպիսիք են. Անիմացիա, Խաղերի մշակում, Կայք էջերի մշակում, Գծանկարչական դիզայն, 3D Մոդելավորում, Ծրագրավորում, Ռոբոտատեխնիկա, Երաժշտություն, Գրական ստեղծագործություններ, Ֆիմերի ստեղծում և այլն:

“ԹՈՒՄՈ”-յում կիրառվող կրթական մեթոդը հանդիսանում է բարձր նորմուծական (ինովացիոն). դա զետեղված է անկախ ուսուցողական գործունեության, (e-ուսուցման), ձեռքի աշխատանքի սեմինարների և նախագծային լաբորատորիաների միջև: Այդ հիբրիդային կրթական մոդելը օգնում է սովորողներին զարգացնել մի շարք հմտություններ, սկսած թիմային աշխատանքի հմտություններից, նախաձեռնության դրսևորումից և մինչև արդյունավետ հաղորդակցության հմտությունները:

Ներկայումս արդեն բացված են մոտ 20 տեխնիկապես սարքավորված **“ԹՈՒՄՈ” կենտրոններ Հայաստանի բոլոր մարզերի** մեծ քաղաքներում և մոտ 110 **“ԹՈՒՄՈ” բաժանմունքներ** փոքր գյուղական բնակավայրերում: **Արդյունքում “ԹՈՒՄՈ” նախագիծը դառձավ հասանելի Հայաստանի բոլոր երիտասարդների համար:**

Հայաստանի Կառուցողական Տեխնոլոգիաների “ԹՈՒՄՈ” Կենտրոնի աջակցությամբ բացվել են **միջազգային “ԹՈՒՄՈ” Կենտրոններ** գործընկեր երկրներում. **Փարիզում, Լյուսեմբուրգում, Բեռլինում, Բեյրութում, Լոս-Անջելեսում, Տոկիոյում, Մոսկվայում, Կիևում:**

**“ԹՈՒՄՈ” Կենտրոնը Փարիզում** բացվել է 2019թ. հոկտեմբերի 15-ին Փարիզի քաղաքապետ Աննա Հիդալգոյի նախաձեռննությամբ, որը այցելել էր Երևանը 2018թ. հունվարին: Փարիզյան “ԹՈՒՄՈ”- յում ուսանում են առավել քան 4000 աշակերտ: Փարիզի քաղաքապետը նշել է. ““ԹՈՒՄՈ”-**ի օգնությամբ մենք Փարիզի երիտասարդությանը կապահովենք այն ամբողջ գործիքակազմով, որը անհրաժեշտ է ապագա աշխարհը ձևավորելու համար”.**

<u>“ԱՐՄԱՏ” ինժեներական լաբորատորիաները:</u>

Ներկայումս մոտ 10 000 աշակերտ, սկսած 10 տարեկանից, ուսուցանում են իրենց ավելի, քան 300 “ԱՐՄԱՏ” ինժեներական լաբորատորիաներում, որոնք գործում են **միջին և ավագ** դպրոցներում Հայաստանի բոլոր մարզերում և կահավորված են համակարգիչներով, ռոբոտների ստեղծման (հավաքման) համար համալրող

մանրամասներով և 3D տպիչներով ։ Նրանք սովորում են կոդավորում, ծրագրավորում և ռոբոտների հավաքում: Դեռ ավելին, նրանք սովորում են հաղթահարել մարտահրավերները բազմաթիվ իրավիճակներում: Ավելի քան 280 դպրոցներից հայ երիտասարդ ինժեներների աշխատանքները Ռոբոտոտեխնիկայի, մասնավորապես 3D Մոդելավորման և և 3D Տպման, բնագավառում ներկայացված էին 2019 Digi Tec Expo-յում:

“ԱՐՄԱՏ”-ի կողմից ներկայացրած տեխնոլոգիաների ուսուցման հայկական մոդելը արդեն ներդրված է այնպիսի երկրների դպրոցներում, ինպիսիք են. **Հնդկաստանը, Եթովպիան, Աֆղանստանը:** Դեռ ավելին, այնպիսի երկրներ, ինչպիսիք են. ***Ռուսաստանը, Բուլղարիան, Լիտվան, Էստոնիան, Բանգլադեշը, Մալայզիան, Բրազիլիան, Իրաքը*** և մի քանի այլ երկրներ ևս մեծ հետաքրքրություն են հանդես բերել “ԱՐՄԱՏ” նախագծի նկատմամբ:

***Հիմնվելով*** Հայաստանի բոլոր մարզերի **միջին և ավագ** դպրոցներում ստեղծված և ***ի շնորհիվ*** կրթության բարձր նորամուծական (ինովացիոն) մեթոդների հաջողությամբ գործող տեղեկատվական և ինժեներական բնագավառներում եզական կառույցների. “ԹՈՒՄՈ”՝ Կառուցողական Տեխնոլոգիաների Կենտրոնների և “ԱՐՄԱՏ” ինժեներական լաբորատորիաների հակիրճ նկարագրման վրա; ***նկատի առնելով*** այնպիսի ուսուցողական կենտրոնների առկայությունը, ինչպիսիք է Լորվա մարզի Դեբեթ գյուղի միջհամայնքային կրթական կենտրոնը, որտեղ շատ գյուղերի աշակերտներ, այլոցից բացի, մշակում են մոդելների և **Կայք** էջերի ստեղծման պիլոտային Նախագծեր, որոնք ուղղված են գյուղական համայնքների զարգացմանը,

- **աշակերտները և ուսանողները, որոնք տիրապետում են զարգացած զանազան հմտությունների, ունեն պատրաստվածության և պատճառաբանվածության բարձր աստիճան, որը բավարար է հաջող ներգրավման համար աղետների կանխարգելման տարածքային ՊՔՏ կայք էջերին մոբիլ հեռախոսների միջոցով վտանգների մասին հաղորդման գործընթացներին, ինչպես դա նախատեսված է LoKSAND նախագծի մեթոդաբանությամբ,**
- **սակայն “ԹՈՒՄՈ”-յի և “ԱՐՄԱՏ”-ի եզականությունը հանդիսանում է նրանում, որ աշակերտները և ուսանողները տիրապետում են Ռոբոտոտեխնիկայի բնագավառում թիմային աշխատանքի աիրաժեշտ հմտությունների և փորձի, ներառյալ անօդաչու թռչող**

սարքերի և գործողությունների լայն շրջանակ ունեցող զանազան գետներեսի ռոբոտների կառուցման բնագավառում: Այսպիսով, տվյալ կոնկրետ մարզի տարածքին բնորոշ հավանական վտանգների ճշտորոշ տեսակավորման և նկարագրման խնդիրը նաև լայն հնարավորություններ է բացում ներգրավելու համար դպրոցականներին և ուսանողներին ինչպես թռչող սարքերի և գետներեսի ռոբոտների կառուցման և օգտագործման համար վտանգների բացահայտման և դրանց հետևման նպատակով, այնպես էլ ավելի ակնառիտական և լիակատար տեղեկատվության փոխանցման և ռիսկերի մասին հաղորդման համար վերափոխված տարածքային (մարզային) "ՊՔՏ Կայք Էջին", ներառյալ մարդկանց համար դժվար հասանելի տարածքներից և վտանգավոր վայրերից,

- աշակերտները այնպիսի ուսուցողական կենտրոններից, ինչպիսին է միջհամայնքային կրթական կենտրոնը Դեբեդում, կարող են ևս ներգրավվել մեր կողմից առաջարկվող վերափոխված Նախագծի շրջանակներում ստեղծվող տարածքային (մարզային) "ՊՔՏ Կայք Էջի"՝ առցանց գործիքի կատարելագործմանը, հաշվի առնելով կոնկրետ մարզի և համայնքների յուրահատկությունները.

Վերոշարադրյալը լավագույն պատճառաբանվածություն կծառայի ներգրավելու համար աշակերտներին և ուսանողներին կառուցողական գործունեության մեջ տեղեկատվական և ինժեներական տեխնոլոգիաների միջոցով աղետների ռիսկերի նվազեցման և սեփական տարածքի պաշտպանության բնագավառում:

Եվ քանի որ "ԹՈՒՄՈ"՝ Կառուցողական Տեխնոլոգիաների Կենտրոնները և "ԱՐՄԱՏ" ինժեներական լաբորատորիաները ստեղծված են և հաջողությամբ գործում են Հայաստանի բոլոր մարզերում, *առաջարկվող նոր վերափոխված պիլոտային Նախագծի* արդյունքները և արժեքավոր փորձը ընտրված մարզի օրինակով կարող են հաջողությամբ ներդրվել հանրապետության բոլոր մարզերում:

Իր հերթին, ի շնորհիվ Հայաստանի "ԹՈՒՄՈ" և "ԱՐՄԱՏ" կառույցների սերտ համագործակցությանը գործընկեր երկրների համանուն կառույցների հետ, CUEPS-ի, Ռավելո, Իտալիա փորձը LoKSAND նախագծի մշակման և ներդրման գործում, ինչպես նաև ECRM-ի, Երևան, Հայաստան փորձը առաջարկվող վերափոխված Նախագծի շրջանակներում (որը սատարվում է EUR-OPA խոշոր վտանգների համաձայնագրի կողմից), հաշվի առնելով

տեղեկատվական և ինժեներական տեխնոլոգիաների բնագավառում "ԹՈՒՄՈ"-ի և "ԱՐՄԱՏ"–ի աշակերտների կառուցողական հնարավորությունները, կարող են փոխանցվել վերը նշված գործընկեր երկրներին, ներառյալ EUR-OPA համաձայնագրի անդամ երկրները:

1.3.3 Սույն 1-ին. բաժնում (կետեր՝ 1.1, 1.2 и 1.3) նշված խնդիրների լուծման ուղիներին մենք մի քիչ ավելի մանրամասն կանդրադառնանք ստորև՝ տվյալ **փաստաթղթի 3-րդ բաժնում**, իսկ մինչ այդ, **հաջորդ 2-րդ բաժնում** ***հակիրճ դիտարկենք ՊՔՏ տարածաշրջանային կայք էջի բովանդակությունը:***

## 2. "Պաշտպանիր քո տարածքը"՝ ՄԱՐԶԱՅԻՆ կայք էջերի ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**2.1 Կայք-էջը *բացատրում է* կայքի նշանակությունը, *պարունակում է* «ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ», հաղորդագրության փոխանցման մեխանիզմները և իսկ հաղորդագրության հետ կապված հետագա գործողությունները:**

**.............**

ԻՆՉԻ՞ ՄԱՍԻՆ ՀԱՂՈՐԴԵԼ: ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՂՈՐԴԵԼ:
Ո՞Վ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ:
ԻՆՉ Է՞ ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ:

**.............**

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՌԻՍԿԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԳՐՎՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ:

ՀԵՏԵՎՈՒՄ ՁԵՐ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԱԼՈՒՆ ՀԱՋՈՐԴՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ:

**2.2 Կայք էջը *պարունակում է նաև* ճանաչողական տեղեկատվություն տարածքի և մարդկանց մասին, աղետների ռիսկերի նվազեցմանը, ապրելու (կենալու), ուժերի և միջոցների արդյունավետ գործադրման և տուրիզմի զարգացման համար տարածքի գրավչության բարձրացմանը ուղղված գործուն քայլերի մասին:**

**.............**

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ
ԳՈՐԾՈՒՆ ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ:

ՁԼՄ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ:

ԻՐԱԶԵԿՈՒՄ ՀԱՎԱՆԱԿԱՆ, ՏՎՅԱԼ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՃԱԽԱԿԻ ԿՐԿՆՎՈՂ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ:

.............

ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ՄԱՐԴԻԿ:

.............

.........................................................................................................................

ԳՈՐԾՈՒՆ ՔԱՅԼԵՐԻ ՄԱՍԻՆ՝ ՈՒՂՂՎԱԾ.

- ՏԱՐԱԾՔԻ ԳՐԱՎՉՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆԸ
  - *ԱՊՐԵԼՈՒ (ԿԵՆԱԼՈՒ) ՀԱՄԱՐ,*
  - *ՌԻԺԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ,*

- ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ :

..........

ՄԵՐ ՄԱՍԻՆ:

**2.3 Հայաստանի համար “Պաշտպանիր քո տարածքը” (ՊՔՏ) ունիվերսալ տարածաշրջանային (մարզային) *կայք էջի* բովանդակությանը, ինչպես նաև դրա մշակման և կանոնավոր և արդյունավետ գործելու հետ կապված հարցերին ավելի մանրամասն անդրադարձ է արվում սույն աշխատության հետևյալ՝ 3-րդ բաժնում:**

## 3. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՄՇԱԿՎԵՆ, ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ, ՈՐՈՆՔ ԵՆԹԱԿԱ ԵՆ ԼՈՒԾՄԱՆ “Պաշտպանիր քո տարածքը” (ՊՔՏ) ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ) Կայք էջերի ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԳՈՐԾԵԼՈՒ ՀԱՄԱՐ

**3.1 Նպատակահարմար է այստեղ ներկայացնել նշված ուղղությամբ արված քայլերի և *արդեն մշակված առաջնահերթ փաստաթղթերի* հակիրճ տեսությունը: Այնուհետև, հաջորդ 3.2 կետում հակիրճ քննարկվում են *մասամբ մշակված և մշակման ենթակա* լրացուցիչ փաստաթղթեր:**

3.1.1 Հաշվի առնելով Հայաստանի յուրահատկությունները, որոշված են խնդիրները, մեթոդական և տեղեկատվական բնույթի անհրաժեշտ փաստաթղթերը և սպասվելիք արդյունքները, ինչպես նաև պիլոտային տարածաշրջանը (մարզը), որի համար պետք է մշակվի “Պաշտպանիր քո տարածքը” տարածաշրջանային (մարզային) կայք էջը:

**3.1.2 Մշակված են երկու բավականին ծավալուն փաստաթուղթ. “Առաջնորդող ցուցումներ “Պաշտպանիր քո տարածքը” (ՊՔՏ) կայք էջ ստեղծելու համար”, որոնք անհրաժեշտ են շահագրգիռ կողմերի համար ՊՔՏ կայք էջի առաջիկա ներկայացումների ժամանակ պարզաբանելու Նախագծի էությունը, ՊՔՏ կայք էջի ստեղծման, կառավարման և օգտագործման մեխանիզմները, ինչպես նաև “Տեխնիկական առաջադրանք Հայաստանի համար “Պաշտպանիր քո տարածքը” (ՊՔՏ) ունիվերսալ տարածաշրջանային (մարզային) *կայք էջերի* ստեղծման համար”:**

- ***Առաջին փաստաթուղթը (N1)*** Եվրոպայի Խորհրդի խոշոր վտանգների համաձայնագրի, Նախագծի գործընկեր՝ Մշակույթային ժառանգության եվրոպական համալսարանական կենտրոնի (Ռավելլո, Իտալիա) և Խոշոր ռիսկերի կառավարման եվրոպական միջտարածաշրջանային գիտական և կրթական կենտրոնի (Երևան, Հայաստան) խորհրդանշաններով ***վերնագրված է՝***

**“Առաջնորդող ցուցումներ “Պաշտպանիր քո տարածքը” (ՊՔՏ) կայք էջ ստեղծելու համար” - (ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՑՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՒ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՂԵՏՆԵՐԻ ԴԵՄ)”:**

**N1 փաստաթուղթը մշակված է ՍԼԱՅԴՆԵՐԻ տեսքով, 34 էջից, հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով:**
**Փաստաթուղթը բավական նույնական կերպով լուսաբանում և արտացոլում է Հայաստանի առանձնահատկությունները, ամբողջությամբ առած, դրա հետ մեկտեղ, դա իր բնույթով**

**համապարփակ (ունիվերսալ) է և կարող է օգտագործվել Հայաստանի ցանկացած տարածաշրջանի (մարզի) համար, հաշվի առնելով դրա առանձնահատկությունները:**

**N1 փաստաթուղթը պարունակում է՝**

- Հնարավոր պարզաբանումներ, որոնք կարող են պահանջվել շահագրգիռ կողմերի համար համապարփակ (ունիվերսալ) տարածաշրջանային (մարզային) ՊՔՏ կայք էջի առաջիկա ներկայացումների ժամանակ "Առաջնորդող ցուցումների" տարբեր կետերի վերաբերյալ, այդ թվում՝ Նախագծի էության, ՊՔՏ կայք էջի ստեղծման, կառավարման և օգտագործման մեխանիզմների վերաբերյալ:
- ՊՔՏ կայք էջի խնդիրների լուսաբանում:
- Քաղաքացիների (ՊՔՏ կայք էջի օգտատերերի) կողմից կազմվող և ուղարկվող հաղորդագրության ձևի մասին այն իրավիճակների վերաբերյալ, որոնք կապված են իրենց տարացքում (գյուղում, քաղաքում, շրջանում, մարզում) իրենց կողմից հայտնաբերված ռիսկերի առկայության հետ:
- Առաջարկություններ հաղորդագրության ձևավորման վերաբերյալ, հաշվի առնելով տվյալ պիլոտային տարածաշրջանի բնութագրերը:

➢ ***Երկրորդ փաստաթուղթը (N2),*** ինչպես արդեն վերը նշված է, մշակված է՝որպես ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ Հայաստանի համար "Պաշտպանիր քո տարածքը" (ՊՔՏ) ունիվերսալ տարածաշրջանային (մարզային) *կայք էջերի* ստեղծման համար", հաշվի առնելով դրա հետագա կոնկրետացումը, նկատի առնելով Հայաստանի համապատասխան տարածաշրջանների առանձնահատկությունները, *և **վերնագրված է**՝*

"ՊԱՇՏՊԱՆԻՐ ՔՈ ՏԱՐԱԾՔԸ" - ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ, ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՒ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՂԵՏՆԵՐԻ ԴԵՄ":

**"ՊՔՏ"-առցանց գործիք վտանգի մասին հաղորդելու և աղետները կանխարգելելու համար:**

"ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ ՊՔՏ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ (ՄԱՐԶԱՅԻՆ) *կայք էջերի* ՍՏԵՂԾՄԱՆ ՀԱՄԱՐ".

**ՈՒղարկիր Քո Տարածքի Պաշտպանությանն ՈՒղղված Քո Հաղորդագրությունը:**

**N2 փաստաթուղթը** մշակված է **հայերեն** (12 էջից)**, ռուսերեն** (11 էջից) և անգլերեն (11 էջից) **լեզուներով:** Պատրաստված է նաև Նախագծի վերաբերյալ **հակիրճ բնագրային (տեքստային) զեկույց անգլերեն լեզվով** (7 էջից):

- **Տեխնիկական առաջադրանքը մշակելիս և,** առաջին մոտեցմամբ, ***ՊՔՏ*** ունիվերսալ տարածաշրջանային (մարզային) ***կայք էջերը* ստեղծելիս**, մենք, այլոց թվում, **ղեկավարվել ենք նաև** այն **գաղափարներով,** որոնք մեզ սիրալի կերպով

տրամադրել եր Նախագծի գործընկեր՝ Մշակույթային ժառանգության եվրոպական համալսարանական կենտրոնը (Ռավելլո, Իտալիա)։ Եվ թեպետ համապատասխան փաստաթղթերը իտալերենով էին, այնուամենայնիվ նրանք բավական օգտակար գտնվեցին։

- Անհրաժեշտ է նշել, որ *ՊՔՏ կայք էջի* հիմնական նպատակին, խնդիրներին և կառուցման տրամաբանությանը համապատասխանող մինիմալ պարտադիր բաժինների հետ միաժամանակ մեր կողմից **փաստաթղթի Հայաստանյան տարբերակում նախատեսված են լրացուցիչ բաժիններ,** ***որոնք կոչված են*** բարձրացնել տեղեկատվական տարրողությունը և ձգողականությունը, և, դրանով իսկ, ***խթանել ՊՔՏ կայք էջի հաճախումը*** և ***օգնել գտնել լրացուցիչ ֆինանսական միջոցներ*** ապահովելու համար կայք էջի կանոնավոր գործունեությունը և կատարելագործումը (տես վերոշարադրյալը սույն փաստաթղթի 2.2 կետում).

### 3.1.3 Հայաստանի համար ՊՔՏ (Պաշտպանիր Քո Տարածքը) ՈՒնիվերսալ Տարածաշրջանային (մարզային) *Կայք էջի* Մշակում։

Հայաստանի համար ՊՔՏ ունիվերսալ տարածաշրջանային (մարզային) *կայք էջի* մշակման և հետագա կատարելագործման համար մենք պայմանագիր ենք կնքել **հայկական "G DESIGN" GROUP Company** կազմակերպության հետ, որը նշված բնագավառում մի շարք աշխատանքների հետ մեկտեղ 2020 թ. կատարել է նաև 2 նախագիծ Եվրոպայի Խորհրդի համար, որոնք արժանացել են բարձր գնահատականի։

Վերը նշված Տեխնիկական առաջադրանքի հիման վրա մշակված Հայաստանի համար ՊՔՏ ունիվերսալ տարածաշրջանային (մարզային) *կայք էջը* ժամանակավոր տեղակայված է ըստ http://protect.landing.am/administrator հասցեի։

## 3.2 Սույն փաստաթղթի 3.1 կետում բերվում է ՊՔՏ ունիվերսալ տարածաշրջանային (մարզային) *կայք էջի* մշակման և հետագա կատարելագործման համար անհրաժեշտ, մեր կողմից *արդեն մշակված առաջնահերթ փաստաթղթերի* հակիրճ տեսությունը։

**Իսկ այստեղ՝ կետ 3.2 –ում հակիրճ դիտարկվում են** ***մասամբ մշակված և մշակման ենթակա լրացուցիչ փաստաթղթեր*****, որոնք** անհրաժեշտ են **ՊՔՏ (Պաշտպանիր Քո Տարածքը) նախագծի հիմնական խաղացողների (կողմերի)** մոտիվացիայի (շարժառիթների) նշանակալից ուժեղացմանը և գործողությունների կոնկրետացմանը (հստակեցմանը) նպատակաուղղված նախագծերի իրականացման համար։

«Պաշտպանիր Քո Տարածքը» (ՊՔՏ) նախագծի հիմնական խաղացողների (կողմերի) և նրանց՝ Նախագծի իրականացմանը ներգրավելու համար մոտիվացիայի

(շարժառիթների) նշանակալից ուժեղացման ուղիների մասին հակիրճ ասվում է սույն փաստաթղթի 1.2 կետում:

Հիմնվելով 1.2 կետում շարադրվածի վրա, մենք, ՊՔՏ նախագծի շրջանակներում, սկսել ենք մշակել, առաջին մոտեցմամբ, երեք ներքոնշյալ լրացուցիչ պիլոտային նախագծերը, որոնք ուղղված են բարձրացնելու մոտիվացիան (շարժառիթները) և կոնկրետացնելու գործողությունները ՊՔՏ նախագծի երեք հիմնական խաղացողների (կողմերի). դպրոցների (դպրոցի վարչակազմի, ուսուցիչների, աշակերտների և նրանց ծնողների); բնակչության լայն զանգվածների, ներառյալ ըստ իրենց բնակվելու վայրի տարացքային համայնքներում; տեղական զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ):

**3.2.1 "Հատուկ տեստեր դպրոցի վարչակազմի, ուսուցիչների, աշակերտների և նրանց ծնողների համար, ուղղված բնական, տեխնածին և այլ բնույթի արտակարգ իրավիճակներից դպրոցների և այլ կրթական հաստատությունների անվտանգության գնահատմանը":**

Նախագծի արդյունքները կարող են հիմք ծառայել մշակելու համար հիմնական հանձնարարությունները, ուղղված դպրոցների խոցելիության նվազեցմանը, դպրոցի անձնակազմի, աշակերտների և նրանց ծնողների պատրաստման բարձրացմանը արտակարգ իրավիճակներում նույնական գործողությունների, ինչպես նաև կոնկրետ աղետներին նախապատրաստվելու պլանների վերանայմանը և կատարելագործմանը:

**3.2.2 "Բնական աղետների և այլ բնույթի արտակարգ իրավիճակների դեպքում բնակչության առաջնահերթ գործողությունները ըստ իրենց բնակվելու վայրի տարացքային համայնքներում":**

Նախագիծը առաջարկում է աղետներին նախապատրաստվելու և դրանց արձագանքելու բնակիչների (ռեզիդենտների) շահագրգռվածության բարձրացմանը ուղղված նոր գաղափարներ, ինչպես նաև առաջարկում է հանձնարարականներ, ուղղված իրենց ներգրավմանը տարացքային համայնքներում աղետների ռիսկերի նվազեցման գործընթացներին՝ աղետներին կայունության բարձրացմանը նպատակաուղղված տարացքային համայնքների բնակիչների համապատասխան կազմակերպությունների ստեղծման միջոցով:

Իրենց համագործակցությունը և տեղական ինքնակառավարման, տարացքային կառավարման մարմինների և կենտրոնական կառավարության օգնությունը:

Բնակիչների նախապատրաստությունը հակազդելու աղետներին. "ինքնօգնություն" և "փոխօգնություն":

(Որոշ մոտեցումներ հիմնահարցի լուծմանը):

3.2.3 “Արտակարգ իրավիճակներում իշխանությունների, զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) և քաղաքացիների միջև հաղորդակցական-տեղեկատվական համագործակցության վերլուծությանը և ուժեղացմանը նպատակաուղղված հանձնարարականներ”:

Ճգնաժամային (տագնապալից) հանգամանքներում հասարակայնության հետ հաղորդակցական և տեղեկատվական աշխատանքի վիճակի վերլուծություն:

Որոշ հաձնարարականներ արտակարգ իրավիճակներում հասարակայնության հետ հաղորդակցական և տեղեկատվական աշխատանքի բարելավման վերաբերյալ:

## Իրենց Տարածքի Պաշտպանությանն Ուղղված Քաղաքացիների (Լրահաղորդների) Հաղորդագրության Շարժման Լրիվ Պտույտը!




*Ցիկլը (Բոլորապտույտը)* ներառնում է՝

- Լրահաղորդի կողմից հաղորդագրության ուղարկումը:
- ՊԵՏ կայք էջի օպերատորի կողմից հաղորդագրության ընդունումը և դրա ստուգումը ԱԻ մարզային ծառայության կողմից:
- Հաղորդագրության փոխանցումը կառավարման իրավասու մարմիններին:
- Հաղորդագրության ուղարկումը ՁԼՄ-ներին:
- Հաջորդող գործողությունների ձեռնարկում :
- Պատասխանի ուղարկում լրահաղորդին:

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 31.05.2023 11:40